# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

# 2022-2026թ.թ.

Կազմել է Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը

Հաստատվել է Սևան համայնքի ավագանու՝ 14.06.2022թ. թիվ 67- Ն որոշմամբ

2022

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք .......................................................

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն ..................................................

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն ..................................................

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը ..........................................

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը .....................................................

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները ..........................................................................................

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ .............................................

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների /ՈՒԹՀՍ/ վերլուծություն ..............................................................................................

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .............

3.1 Համայնքի զարգացման տեսլական ..............................................................................

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ..............................................

4. ՀՀԶԾ ֆինանսավորում ..........................................................................................

5. ՀՀԶԾ մոնիտորինգ ..................................................................................................

Հավելվածներ

- ✓ Ծրագրերի անձնագրեր
- ✓ Սևան համայնքի մշակութային զարգացման ռազմավարություն

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ



2021թ.-ի դեկտեմբերի 5-ին Սևան համայնքում կայացած Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությամբ Սևան միավորված համայնքը, որը ներառում է Սևան քաղաքը և 11 գյուղական բնակավայրեր՝ գ. Գագարին, Գեղամավան, Դդմաշեն, Ջովաբեր, Լճաշեն, Ծաղկունք, Ծովագյուղ, Նորաշեն, Չկալովկա, Սեմյոնովկա, Վարսեր, մտավ մի նոր շրջափուլ, որը ենթադրում է նոր մոտեցումներ, աշխատաոճ:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի՝ 2022-2026թ.թ. 5-ամյա զարգացման ծրագրի առանցքում համայնքային ռազմավարական ուղղությունների ուրվագծումն է, որոնց շնորհիվ որդեգրվելու է զարգացման մի նոր փուլ:

ՀՀԶԾ կազմելիս առաջնորդվել ենք ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված մեթոդաբանությամբ:

Սևան միավորված համայնքում ներառված բնակավարերն իրենց աշխարհագրական դիրքով, մարդկային և բնական ռեսուրսներով, արդեն իսկ իրականացրած ծրագրերով, ստեղծած լավագույն ավանդույթներով նախանշում են ապագայի տեսլականը: Շատ կարևոր է, թե ինչպիսի համայնք ենք ուզում ունենալ 5 տարի անց և ցանկալի արդյունքի հասնելու համար առաջիկա տարիների ընթացքում հիմնական ինչ ուղղություններ ենք որդեգրելու այդ արդյունքին հասնելու համար:

Մեր կարևորագույն նպատակն է՝

ունենալ զարգացած, կազմակերպված, հարմարավետ, մրցունակ և ներկայանալի համայնք:

Հաշվի առնելով համայնքի բնակավայրերի արդեն իսկ ունեցած ձեռքբերումները, անցած ճանապարհը, առկա հիմնախնդիրները և առաջնահերթությունները, համայնքային գերակայությունները՝ առանձնացվել են այն ոլորտները, որոնց միտված են լինելու մեր ծրագրերն ու դրանցով պայմանավորված գործողությունները՝

*Համայնքային բյուջեի արդյունավետ կառավարում*

- ✓ Համայնքային բյուջեի կայուն աճի ապահովման ուղղությամբ հետևողական քայլերի ձեռնարկում.
- ✓ Արդյունավետ կառավարման միջոցով համայնքային բյուջեի իրատեսական համակարգի ստեղծում՝ երաշխավորելով ծախսերի կատարման հրապարակայնությունը.

*2. Տարածաշրջանի մարդկային և բնական ռեսուրսների կառավարում*

- ✓ Սևանի տարածաշրջանի ռեսուրսների արդյունավետ, նպատակային կառավարում և օգտագործում.
- ✓ Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում, միացյալ ծրագրերի և նախաձեռնությունների իրականացում.

- ✓ Տարածաշրջանի մտավոր ներուժի համախմբում, լավագույն ավանդույթների շարունակում, արվեստագետների բանկի ստեղծում.
- ✓ Քաղհասարակության և հասարակական կազմակերպությունների միջոցով ոչ ֆորմալ կրթական հարթակների ստեղծում.
- ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդական զբաղվածության և առաջ մղման խնդիրների լուծում՝ համագործակցությամբ ոլորտում հաջողություններ գրանցած ընկերությունների և անհատների հետ.
- ✓ Խրախուսել տարածաշրջանում աշխատատեղերի ստեղծման նպատակով ներդրում կատարողների, նպաստել փոքր ու միջին բիզնեսի զարգացմանը.
- ✓ Գյուղաբնակ և քաղաքաբնակ կանանց առաջխաղացման ծրագրերի մշակում.

3. *Տարածաշրջանի ենթակառուցվածքների պահպանում, բարելավում, ճանապարհաշինական ծրագրերի իրականացում*

- ✓ Սևանի քաղաքային զբոսայգու վերականգնում՝ տեղական բյուջեի, բարերարների և դրամաշնորհային ծրագրերի միջոցով՝ այն դարձնելով մշակույթի և ժամանցի տարածաշրջանային զբոսայգի.
- ✓ Բակային տարածքների ճանապարհների բարեկարգում, տարածքների կանաչապատում.
- ✓ Ներհամայնքային և միջհամայնքային փողոցների, ճանապարհների հիմնանորոգում, բարեկարգում, պահպանում.
- ✓ Սևանի տարածաշրջանի բնակավայրերում գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում, էնեգախնայող համակարգի ներդրում.
- ✓ Տարածաշրջանում վերականգնող էներգետիկային ուղղված ծրագրերի իրականացում, էներգաարդյունավետ և էներգախնայող տեխնոլոգիաների ներդրում.
- ✓ Բնակավայրերի ջրամատակարարման, ջրահեռացման ներքին ցանցերի վերանորոգում.

*4. Գյուղատնտեսության կայուն զարգացում*

- ✓ Բնակավայրերում ոռոգման համակարգերի գործարկում, արդիականացում.
- ✓ Անասնապահությանն ու անասնաբուծությանն ուղղված ծրագրերի խրախուսում.
- ✓ Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման լիզինգի ծրագրերի շրջանակներում տեխնիկայի հավաքակազմի համալրմանն ուղղված ծրագրերի ներդրում և խրախուսում.
- ✓ Ջերմատնային տնտեսությունների հիմնմանը նպաստող ծրագրերի խրախուսում.
- ✓ Խելացի անասնաշենքերի կառուցման ծրագրերի ներդրում.
- ✓ Կաթի, կաթնամթերքի արտադրության, վերամշակման, սպանդանոցների կառուցման ծրագրերի ներդրում.
- ✓ Դրամաշնորհային և պետական աջակցության ծրագրերի միջոցով տարածաշրջանի բնակավայրերում գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման արտադրամասեր ստեղծելուն ուղղված աշխատանքների իրականացում.
- ✓ Ներդրումային ծրագրերի շարունակականության ապահովում.

*5. Նախադպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակության կազմակերպում, կրթական ծրագրերի ներդրման խրախուսում*

- ✓ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգման, հիմնանորոգման, պահպանման և կահավորման ծրագրերի իրականացում.
- ✓ Արտադպրոցական և մշակութային հաստատությունների շենքերի հիմնանորոգում, կահավորում.
- ✓ Տարածաշրջանի մանկապարտեզներ չունեցող բնակավայրերում նախակրթարանների հիմնում, լավագույն փորձի տեղայնացում.
- ✓ «Գազարին» պրոեկտի շարունակականության ապահովում.
- ✓ Տարածաշրջանի բնակավայրերում արվեստի և արհեստի խմբակների հիմնում.

6. *Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում*

- ✓ Սևանի բիզնես կենտրոնի գործունեության միջոցով ստարտափերի ներդրում, գործարար միջավայրի բարելավում, ֆորումների կազմակերպում, ներդրումների խթանում և խրախուսում.
- ✓ Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ծրագրերի խրախուսում՝ համագործակցությամբ պետական և մասնավոր կառույցների.
- ✓ Ներդրումային ծրագրերի խրախուսման մեխանիզմների ստեղծում.

7. *Մշակութային կյանքի կազմակերպում*

- ✓ Տարածաշրջանի մշակութային արժեքների հարթակի ստեղծում, մշակութային արժեքների պահպանմանն ուղղված ծրագրերի, փառատոնների իրականացում՝համահունչ բնակավայրերի առանձնահատկություններին.
- ✓ Սևանի մշակույթի զարգացման ռազմավարության մշակում EU4Culture ծրագրի շրջանակներում՝ համագործակցությամբ հասարակական կազմակերպությունների.

*8. Ֆիզիկական կուլտուրայի և ակտիվ ապրելակերպի խրախուսում*

- ✓ Տարածաշրջանում մարզական կյանքի աշխուժացման, մասսայական սպորտի տարածման նպատակով միջոցառումների կազմակերպում, մարզադպրոցի և խմբակների բնականոն գործունեության ապահովում, համալրում սպորտային գույքով.
- ✓ Մարզական օբյեկտների, մարզա և խաղահրապարակների բարեկարգում, կառուցում, խաղամիջոցների տեղադրում.
- ✓ Համայնքի ղեկավարի գավաթի համար մրցախաղերի և մրցաշարերի անցկացում.
- ✓ Տարածաշրջանում ֆուտբոլի մասսայականացմանը ուղղված ծրագրի իրականացում.

*9. Բնակարանային ֆոնդի պահպանում*

- ✓ Բնակֆոնդի պահպանության և կառավարմանն ուղղված խնդիրների կարգավորում, օժանդակություն համատիրությունների գործունեությանը, վերահսկողական մեխանիզմների մշակում.
- ✓ Համայնքում առկա վթարային շենքերի սեյսմակայունության բարձրացման դրանց հետագա շահագործման նպատակահարմարության, 4-րդ կարգի վթարայնություն ունեցող շենքերի սեփականատերերին տարհանման և փոխհատուցման խնդիրների կարգավորման նպատակով համագործակցված աշխատանքի իրականացում համապատասխան գերատեսչությունների հետ.
- ✓ Բազմաբնակարան շենքերի էներգախնայող ծրագրերի իրականացում, համատիրությունների դերի բարձրացում.
- ✓ Բարձրահարկ բազմաբնակարան շենքերի վերելակների անխափան գործարկման ապահովում.
- ✓ Տանիքաշինության ծրագրերի շարունակականության ապահովում.

*10. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում, աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում, համայնքային գերեզմանատների պահպանում*

- ✓ Քաղաքաշինական ճիշտ պլանավորմանն ուղղված միջոցառումների իրականացում.
- ✓ «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» միջոցով տարածաշրջանում աղբահանության արդյունավետ համակարգի ներդրում.
- ✓ Կոմունալ տնտեսության տեխնիկական պարկի թարմացում և համալրում.
- ✓ Մաքուր միջավայրի ապահովում.
- ✓ Շրջակա միջավայրի պաշտպանության, բնապահպանական խնդիրների լուծման նպատակով համալիր ծրագրերի իրականացում՝ համագործակցելով տեղական և միջազգային կազմակերպությունների հետ.

*11. Հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում*

- ✓ Միջբնակավայրային և ներքաղաքային երթուղիների կազմակերպում, համակարգային ծրագրերի իրականացում.
- ✓ Ճանապարհային ենթակառուցվածքների կահավորում.
- ✓ Ճանապարհային երթևեկության անվտանգության համակարգի ներդրում.

*12. Զբոսաշրջության զարգացման խթանում*

- ✓ Սևանի տարածաշրջանի ճանաչելիություն բարձրացման, զբոսաշրջային գրավչությունների ավելացման նպատակով տարածաշրջանի բրենդի մշակում.
- ✓ Տարածաշրջանի բնակավայրերում զբոսաշրջությունը խթանելու նպատակով ենթակառուցվածքների զարգացում, գործող ենթակառուցվածքների բարելավում հյուրատների գործունեության ապահովում, նորերի հիմնման ծրագրերի խրախուսում.

- ✓ Մշակութային, ագրո, էկո, ժամանցային և արկածային զբոսաշրջությանն ուղղված ծրագրերի մշակում, տարածաշրջանի զբոսաշրջային գրավչությունների ճանապարհային քարտեզի ստեղծում.
- ✓ Սևանի տարածաշրջանի պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված ծրագրերի իրականացում՝ համագործակցությամբ տեղական և միջազգային կազմակերպությունների.

*13. Համայնքում անվտանգությանն ուղղված խնդիրների լուծում*

- ✓ Համայնքի բնակիչների անվտանգությունն ապահովող ենթակառուցվածքների բարելավում.
- ✓ Քաղաքացիական պաշտպանության ոլորտում բնակչության իրազեկվածությանն ուղղված ծրագրերի և վարժանքների իրականացում.
- ✓ Աղետների, ռիսկերի կառավարմանն ուղղված համալիր ծրագրի մշակում.
- ✓ Համայնքային ենթակայության և բազմաբնակարան շենքերի սեյսմակայունության ապահովում.

*14. Երիտասարդական ծրագրերի խրախուսում*

- ✓ Երիտասարդական ծրագրերի խթանում, երիտասարդական քաղաքականության և ռազմավարության մշակում.
- ✓ Հասարակական կազմակերպությունների միջոցով կրթական ոչ ֆորմալ հարթակների ստեղծում, երիտասարդների առաջխաղացման ծրագրերի իրականացում.
- ✓ Համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի ստեղծում.

*15. Բնակչության իրավական և սոցիալական պաշտպանություն*

- ✓ Սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում, համագործակցություն պետական կառույցների, տեղական և միջազգային բարեգործական կազմակերպությունների հետ, հասցեականության ապահովում.
- ✓ Շարունակել բազմաշերտ օժանդակությունը թոշակառուներին, հաշմանդամություն ունեցող անձանց, բազմազավակ ընտանիքներին, արցախյան պատերազմներում զոհվածների և հաշմանդամություն ունեցող զինծառայող ընտանիքներին.
- ✓ Սևանի տարածաշրջանի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավական և օրինական շահերի պաշտպանության ապահովում.

*16. Համագործակցված և բազմաշերտ գործունեության իրականացում*

- ✓ Ապակենտրոնացված համագործակցության ամրապնդում և ընդլայնում՝ ողջ տարածաշրջանի ներգրավմամբ.
- ✓ Առողջապահական հաստատությունների հետ համագործակցված աշխատանքի իրականացում.
- ✓ Տարածաշրջանի հանրակրթական դպրոցների և բազմագործառութային պետական քոլեջի հետ համագործակցված աշխատանքի ապահովում, օժանդակության ցուցաբերում.

- ✓ Միջազգային կազմակերպությունների և ցանցերի հետ համագործակցության շարունակականության ապահովում, անդամակցում միջազգային կազմակերպություններին.

*17. Հրապարակայնության և հաշվետվողականության ապահովում*

- ✓ Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարելավում, թափանցիկ աշխատաոճի շարունակականության ապահովում.
- ✓ Բնակիչներին որակյալ ծառայությունների մատուցում «Մեկ պատուհան»-ի ներդրմամբ՝ քաղաքացիների սպասարկման գրասենյակի միջոցով.

Համայնքում առկա հիմնախնդիրների մեծ մասը տասնամյակների վաղեմություն ունի. բնակարանային ֆոնդի, ներհամայնքային ճանապարհների և փողոցների, կրթամշակութային օջախների շենքային պայմանների արդի վիճակն, որոշ բնակավայրերում անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունն ուղղակիորեն խոչընդոտում է մի շարք ծրագրերի իրականացմանը:

Համադրելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու առանձնահատկությունները, ունեցած փորձը, միավորված համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում ձևավորված ավանդույթները, արդեն իսկ իրականացված աշխատանքներն ու առաջիկա ծրագրերը՝ հիմնարար քայլերի ու դրանից բխող գործողությունների հիմքը ՀՀԶԾ-ն է, որի մշակման, կազմման աշխատանքներում ներգրավվել են համայնքի ղեկավարին կից գործող երկու խորհրդակցական մարմինները, համայնքապետարանի աշխատակազմը, համայնքում գործող ՀԿ-ների ներկայացուցիչները, ակտիվ և նախաձեռնող բնակիչները:

Ծրագրի մշակման ընթացքում կարևորվել են տարբեր խմբերի առաջարկությունները, ֆոկուս խմբային հանդիպումները, հանրային քննարկումները, արդեն իսկ իրականացվող համագործակցային աշխատանքը: Համայնքի զարգացման 5-ամյա ծրագրում ներառվել են Սևան քաղաքի մշակութային ռազմավարությունը, որը մշակվել է EU4Culture ծրագրի շրջանակներում <<Գազարին>> ներդրումային ծրագիրը որն իրականացվում է ԴԱՐ հիմնադրամի, կառավարության և համայնքի համագործակցությամբ::

ՀՀԶԾ-ն փաստաթղթային այն մեկնարկն է, որ դառնալու է պետություն-համայնք-բնակիչ-մասնավոր սեկտոր համագործակցության երաշխիքն ու շարժիչ ուժը, կյանքի կոչելով համայնքի զարգացման առաջիկա 5 տարիների ծրագրերը:

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2. *Սևան համայնքի իրավիճակի նկարագրություն*

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն





Սևան համայնքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հյուսիս-արևմտյան հատվածում: Համայնքը խոշորացվել է 2021 թվականին, այն իր կազմում ընդգրկում է Սևան, Գագարին, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, Վարսեր, Ծաղկունք, Գեղամավան, Դդմաշեն, Ջովաբեր, Ծովագյուղ, Սեմյոնովկա բնակավայրերը Սևան քաղաք կենտրոնով: Համայնքում հաշվառված է 43.720 մարդ: Համայնքում կա 14 դպրոց, գործում է բազմագործառութային քոլեջ ( Սևան քաղաքում): Սևան համայնքն ունի 18 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ՝ նախադպրոցական ուսումնական հաստատություն, մարզադպրոց, երաժշտական դպրոց, գրադարանների կենտրոնացված համակարգ, մշակութային կենտրոն, արվեստի դպրոցներ և կոմունալ տնտեսություն:

Ձմեռը չափավոր ցուրտ է, գերիշխում է թույլ սառնամանիքային անհողմ եղանակ /միջին ջերմաստիճան -2.50 - -12.50/, ամռանը գերակշռում է «արևոտ, չափավոր խոնավ» եղանակային տիպը՝ նվազագույն տեղումների քանակով, որոնք ուղեկցվում են նաև ամպրոպային երևույթներով: Գարնանից ամռան անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության:

Բնակավայրը 1842թ-ին հիմնադրել են եկվոր ռուս աղանդավորները և կոչել են Ելենովկա: 1935թ. այն վերանվանվեց Սևան: 1961թ. բնակավայրին շնորհվեց շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ /մեկ ավանով և տասը գյուղով/, իսկ 1967թ.-ին՝ հանրապետական ենթակայության:

Սևան համայնքը զբաղեցնում է 39689.27հա հողատարածք:

Իր աշխարհագրական դիրքով Սևանը Հայաստանի ամենալեռնոտ շրջաններից է. գտնվում է Արեգունի, Փամփակի և Գեղամա լեռնաշղթաների հանգուցակետում:

Համայնքն իր ափամերձ տարածքներով զբոսաշրջությամբ, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է: Այն առանձնանում է ջրային ռեսուրսներով, բնապահպանական և մշակութային հուշարձաններով:

Ներկայումս սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններից է փոքր և միջին բիզնեսի, զբոսաշրջության զարգացումը:

Համայնքում զարգացած է ծառայությունների մատուցման ոլորտը, գործում են կրթական, առողջապահական, մշակութային հաստատություններ, սպասարկող կազմակերպություններ և ընկերություններ, բանկային մասնաճյուղեր, կապի օպերատորների մասնաճյուղերի գրասենյակներ:

Համայնքի բնակարանային տնտեսության պահպանումն իրականացվում է գործող 5 համատիրությունների միջոցով, որոնք ընդգրկում են 199 բազմաբնակարան շենք:

Սևանում է գտնվում «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, որի բնագիտական թանգարանն էլ Սևանա լճի, տարածաշրջանի կենդանական և բուսական աշխարհի, ժողովրդագրության, ավանդույթների ամբողջական ցուցանմուշների և ցուցադրությունների եզակի վայր է:

Սևանում լույս են տեսնում «Սևան» թերթը «Ափ» ամսագիրը, գործում է «STV-1» հեռուստաընկերությունը:

Համայնքը՝ ի դեմս ՏԻՄ-ի, ապակենտրոնացված գործընկերային հարաբերություններ է հաստատել Ֆրանսիայի Գրենոբլ (2004թ.), Լեհաստանի Բրոդնիցա (2010թ.), Բելառուսի Օսիպովիչ (2011թ.), Իտալիայի Ավիլիանա (2016թ.), Չեխիայի Պրահա-Վինոր (2016թ.), քաղաքների, Երևանի Էրեբունի վարչական շրջանի (2015թ.) հետ:

Համայնքում գործունեություն են իրականացնում մի շարք հասարակական կազմակերպություններ, ասոցիացիաներ:

Աղյուսակում ներկայացված է Սևան համայնքի բնակչության սեռատարիքային կազմը՝ համաձայն 2022թ. հունվարի 1-ի տվյալներ

| Բնակավայր | Մշտական բնակչություն | 5-6 տ. | 7-10 տ. | 11-14 տ. | 15-17 տ. | 18-22 տ. | 23-45 տ. | 46-64 տ. | 65-ից բարձր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ք. Սևան | 23992 | 566 | 1247 | 1369 | 901 | 1243 | 8167 | 6025 | 3174 |
| գ. Գագարին | 1744 | 39 | 118 | 104 | 75 | 89 | 624 | 401 | 195 |
| գ. Լճաշեն | 4122 | 96 | 235 | 205 | 161 | 222 | 1360 | 1141 | 452 |
| գ. Չկալովկա | 531 | 16 | 23 | 28 | 18 | 17 | 186 | 129 | 77 |
| գ. Նորաշեն | 463 | 9 | 24 | 17 | 14 | 23 | 166 | 166 | 31 |
| գ. Վարսեր | 2034 | 41 | 71 | 76 | 46 | 66 | 596 | 473 | 195 |
| գ. Ծաղկունք | 1025 | 33 | 53 | 50 | 34 | 61 | 342 | 283 | 116 |
| գ. Գեղամավան | 1699 | 42 | 91 | 87 | 66 | 90 | 566 | 503 | 157 |
| գ. Դդմաշեն | 2626 | 62 | 137 | 125 | 72 | 113 | 864 | 695 | 225 |
| գ. Զովաբեր | 1444 | 43 | 57 | 64 | 68 | 92 | 535 | 429 | 151 |
| գ. Ծովագյուղ | 4175 | 150 | 210 | 227 | 150 | 205 | 1416 | 1101 | 371 |
| գ. Սեմյոնովկա | 292 | 10 | 18 | 13 | 17 | 15 | 106 | 76 | 24 |

## 2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

*Սևան համայնքի ընդհանուր բյուջեն 2021-2022թ.թ.*

| Հ/Հ | 2021թ. | 2022թ. | Աճ կամ նվազում 2021թ. համեմատ /տոկոս/ |
|---|---|---|---|
| 1. Համայնքի ընդհանուր բյուջեն ա/թ<br>-վարչական բյուջե<br>- ֆոնդային բյուջե | 774191.5<br>255917.0 | 1544243.1<br>1021689.0 | 2 անգամ<br>4 անգամ |
| 2. Սեփական եկամուտներ | 268135.3 | 565714.2 | 2.1 անգամ |
| 3. Սեփական եկամուտներ տեսակարար կշիռը վարչական բյուջեի մեջ | 34.6 | 36.6 | 2.0% |

*Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը*՝ 268.1 մլն. դրամ (26.0%) 2021թ.-ին, իսկ 2022 թ.-ին միավորված համայնքի դեպքում՝ 565.7 մլն. դրամ (22.0%):

**Համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների** թիվը 8 է, հիմնական սպառման շուկաները՝ Սևանի տարածաշրջան, Հայաստանի Հանրապետության տարածք, Ռուսաստանի Դաշնություն:

*Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հուշարձաններ*

Սևան քաղաքից ընդամենը 6 կմ հեռավորության վրա՝ Երևան-Թբիլիսի մայրուղուն հարող տարածքում է գտնվում Սևանա թերակղզին՝ հեթանոսական շրջանից մինչև միջնադար, մինչև մեր

օրերը ձգվող հնություններով: Հատկապես աչքի են ընկնում Սուրբ Առաքելոց և Սուրբ Կարապետ եկեղեցիները, որոնք կառուցվել են 874թ-ին: Առաքելոց եկեղեցու աջ խորանում է տեղավորված իր հրաշագործ հատկություններով հայտնի «Ամենափրկիչ» խաչքարը / 1653 թ. /:

Թերակղզում է գտնվում նաև Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցը, որը հոգևորականներ է պատրաստում Հայ Առաքելական եկեղեցու համար:

2015թվ-ի մայիսի 31-ին քաղաքի Վլ. Կարապետյանի անվան հրապարակին կից իր դռները բացեց Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին՝ ֆրանսահայ բարերար Սարգիս Բեդոյանի և նրա ընտանիքի մեկենասությամբ: Եկեղեցական կոչումով սարկավագ Սարգիս Բեդոյանը ցեղասպանությունից փրկված մարդկանց ժառանգը լինելով՝ Սևանում կառուցեց եկեղեցի՝ ի հիշատակ իր ծնողների (ճարտարապետ՝ Արտակ Ղուլյան):

«Փյունիկ» հուշախաչքար (քանդակագործ՝ Մուրադ Հովակիմյան)

Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշախաչքար (քանդակագործ՝ Հրաչ Կարապետյան) :

գ. Դդմաշեն, եկեղեցի Ս. Թադևոս առաքյալ - հուշակոթող, հուշաքար

գ. Դդմաշեն, Հուշարձան 2-րդ աշխարհամարտում զոհվածներին - հուշաքար Արցախյան ազատամարտի զոհվածներին

գ. Դդմաշեն, մատուռ <<Ծառավ Ջոր>> - խաչքար

գ. Ջովաբեր, Հուշարձան՝ 2-րդ աշխարհամարտում զոհվածների - հուշաքար Արցախյան ազատամարտի զոհվածներին

գ. Ծովագյուղ, Հուշարձան2-րդ աշխարհամարտում զոհվածներին - հուշաքար Արցախյան ազատամարտի զոհվածներին, խաչքար

գ. Ծովագյուղ, Մատուռ Ս. Մաշտոց - խաչքար-հուշաքարեր

գ. Վարսեր, Հուշարձան 2-րդ աշխարհամարտում զոհվածներին - հուշաքար Արցախյան ազատամարտի զոհվածներին

Լճաշենի դամբարանադաշտ

*Դպրոցական, նախադպրոցական, արտադպրոցական, այլ ուսումնական կրթական հաստատություններ*

Սևան համայնքում գործում է 4 հիմնական, 14 միջնակարգ և 1 ավագ դպրոց, Սևանի բազմագործառութային պետական քոլեջ, ֆրանկոֆոն ակումբ, Ջրային մարզաձևերի մարզադպրոց:

11 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 4-ը՝ քաղաքում, 7-ը՝ բնակավայրերում՝ Գագարին, Վարսեր, Դդմաշեն, Ջովաբեր, Լճաշեն, Չկալովկա, Ծովագյուղ:

Համայնքում գործում է 3 նախակրթարան՝ թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզի և թիվ 5, թիվ 6 միջնակարգ դպրոցների հենքի վրա:

Հովհ. Այվազովսկու անվան արվեստի դպրոց,

Լճաշեն բնակավայրի արվեստի դպրոց,

Սևանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց,

Սևանի Ն. Դազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց,

Սևանի Վ. Ստեփանյանի անվան Գրադարանների կենտրոնացված համակարգ,

Սևանի Համայնքային մշակութային կենտրոն

Հ. Իգիթյանի անվան գեղագիտական դաստիարակության Սևանի մասնաճյուղ

«Խատուտիկ» զարգացման կենտրոն

| Հ/Հ | Կրթական հաստատության անվանումը | Սահմանված տեղերը | Քանի հոգի է հաճախում |
|---|---|---|---|
| 1 | Մ. Մաշտոցի անվան N 1 հ/դ | 650 | 750 |
| 2 | Յա. Զարոբյանի անվան N 2 հ/դ | 320 | 146 |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Գնդապետ Վլ. Կարապետյանի անվան N 3 հ/դ | 1100 | 920 |
| 4 | N 4 հ/դ | 1170 | 322 |
| 5 | Ցամաքաբերդի N 5 մ/դ | 192 | 91 |
| 6 | Գոմաձորի N 6 մ/դ | 200 | 125 |
| 7 | Գագարինի մ/դ | 395 | 229 |
| 8 | Ավագ դպրոց | 1200 | 300 |
| 9 | Պետական քոլեջ | 500 | 450 |
| 10 | Արհեստագործական ուսումնարան | 250 | 113 |
| 11 | Երաժշտական դպրոց | հարմ. | 171 |
| 12 | Հովհ. Այվազովսկու անվան արվեստի դպրոց | հարմ. | 399 |
| 13 | Համայնքային մշակութային կենտրոն | հարմ. | 170 |
| 14 | Ն. Դազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց | հարմ. | 335 |
| 15 | Թիվ 1 «Բողբոջ» մ/մ | 320 | 95 |
| 16 | Թիվ 2 «Զարթոնք» մ/մ | 110 | 90 |
| 17 | Թիվ 3 «Հեքիաթ» մ | 110 | 175 /լից. հիմ. վրա/ կից կառույցների հաշվին |
| 18 | Թիվ 4 «Գալիք» մ/մ | 110 | 170 |
| 19 | Գագարինի մ/մ | 110 | 60 |
| 20 | Լճաշեն մ/դ | 924 | 450 |
| 21 | Չկալովկա մ/դ | 133 | 58 |
| 22 | Նորաշեն մ/դ | 192 | 44 |
| 23 | Վարսեր մ/դ | 600 | 170 |
| 24 | Ծաղկունքի բաց դպրոց | 308 | 147 |
| 25 | Գեղամավան մ/դ | 392 | 159 |
| 26 | Դդմաշեն մ/դ | 700 | 250 |
| 27 | Ջովաբեր մ/դ | 212 | 165 |
| 28 | Ծովագյուղ մ/դ | 964 | 521 |
| 29 | Սեմյոնովկա մ/դ | 192 | 27 |
| 30 | Ջովաբեր պարտեզ | 90 | 30 |
| 31 | Դդմաշեն պարտեզ | 125 | 60 |
| 32 | Վարսեր պարտեզ | 60 | 40 |
| 33 | Լճաշեն պարտեզ | 90 | 86 |
| 34 | Չկալովկա պարտեզ | 30 | 30 |
| 35 | Ծովագյուղ պարտեզ | 120 | 162 |

*Առողջապահական հաստատություններ*

Սևան - «Բժշկական կենտրոն» ՓԲԸ (ներառում է մանկական և մեծահասակների պոլիկլինիկա, հիվանդանոց բուժհաստատությունները)

Սևան - «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՊՓԲԸ

Սևան - «Լայոնս» ակնաբուժական կլինիկա

Սևան - Երեխաների վերականգնողական կենտրոն
Ջովաբեր բնակավայր - բուժամբուլատորիա
Դդմաշեն բնակավայր - բուժամբուլատորիա
Ծաղկունք բնակավայր - բուժկետ
Գեղամավան բնակավայր - բուժկետ
Լճաշեն բնակավայր - բուժամբուլատորիա
Չկալովկա բնակավայր - բուժկետ
Նորաշեն բնակավայր - բուժկետ
Ծովագյուղ բնակավայր - բուժամբուլատորիա

| Հ/Հ | Հաստատության անվանումը | Քանի հոգու համար է նախատեսված /մահճակալ/ |
|---|---|---|
| 1 | «Բժշկական կենտրոն» ՓԲԸ | 60 /ըստ լիցենզիայի/ |
| 2 | «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՊՓԲԸ | 420 |
| 3 | «Լայոնս» ակնաբուժական կլինիկա | 12 |
| | Երեխաների վերականգնողական կենտրոն | 120 |

Բնակչության թվաքանակը Սևան խոշորացված համայնքում – 43.720 ,
որից 37.251 /առկա/, երեխաների թիվը՝ 9984:

| Բնակավայր | Տնային տնտեսությունների թիվ |
|---|---|
| ք. Սևան | 6011 |
| գ. Գագարին | 482 |
| գ. Լճաշեն | 1048 |
| գ. Չկալովկա | 121 |
| գ. Նորաշեն | 96 |
| գ. Վարսեր | 392 |
| գ. Ծաղկունք | 226 |
| գ. Գեղամավան | 394 |
| գ. Դդմաշեն | 736 |
| գ. Ջովաբեր | 360 |
| գ. Ծովագյուղ | 695 |
| գ. Սեմյոնովկա | 73 |

Աշակերտների թիվ - 2816, որից 274-ը սովորում է ավագ դպրոցում
Նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաներ - 720, որից՝ 650-ը՝ մանկապարտեզ, 70-ը՝ նախակրթարան

- ✓ Հայրենական Մեծ պատերազմի վետերաններ -0
- ✓ Արցախյան հերոսամարտի մասնակիցներ – 495
- ✓ Արցախյան հերոսամարտում զոհվածներ – 46
- ✓ Արցախից տեղահանվածներ – 157

- ✓ 2016թ. ապրիլյան քառօրյայի մասնակիցներ - 52
- ✓ 2020թ. 44-օրյա պատերազմում զոհվածներ – 33
- ✓ Ընդհանուր համայնքում հաշմանդամություն ունեցողներ – 5477
- ✓ Փարոս համակարգի նպաստառուներ - 1450

Համայնքում զբաղված բնակչության թվաքանակը - 3099, որից՝ 2529-ը՝ գրանցված վարձու աշխատող, 570-ը՝ անհատ ձեռնարկատեր

Սևանի զբոսաշրջային գրասենյակի տվյալներով՝ 2015թ. հուլիս-օգոստոս ամիսներին Սևան համայնք /ներառյալ՝ ափամերձ տարածք/ զբոսաշրջիկների հոսքը՝ 21.527 մարդ, 2016թ-ին՝ 32.878, 2017-թ-ին՝ 83.044, 2018թ-ին՝ 131.229, 2019թ-ին՝ 158.612, 2021-ին՝ 128.707:

Ըստ աղյուսակի՝

| 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|---|
| **21.527** | **32.878** | **83.044** | **131.229** | **158.612** | **-** | **128.707** |

01.01.2022թ. դրությամբ - Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների թվաքանակը՝ 1466, որից՝ ընտանեկան նպաստ - 1067, սոցիալական նպաստ՝ 322, հրատապ օգնություն՝ 77

Կենսաթոշակառուների թվաքանակը՝ 8160

Հաշմանդամ անձանց թվաքանակը՝ 26, որից 9 կանայք

Գործազուրկների թվաքանակը՝650 (գրանցված)

Համայնքի հողերի բաշխվածությունն ըստ տեսակների, հա.

| | | Համայնքում առկա | պետական |
|---|---|---|---|
| 1. | Համայնքի վարչական տարածքը, այդ թվում՝ | 39689.27 | 6870.85 |
| 2. | գյուղատնտեսական նշանակության հողեր | 19434.42 | 2204.63 |
| 3. | պահուստային հողեր | - | - |
| 4. | բնակելի շինությունների տակ հողեր | 2437.43 | 47.39 |
| 5. | արդյունաբերական, արտադրական շինությունների տակ հողեր | 492.97 | 3.63 |
| 6. | ընդերքօգտագործման հողեր | - | 59.61 |
| 7. | ճանապարհների տակ հողեր | 3.89 | 281.56 |
| 8. | առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու | 102.09 | 50.15 |

| | | | |
|---|---|---|---|
| | պատմամշակութային նշանակության հողեր | | |
| 9. | անտառային հողեր | - | 6.33 |
| 10. | ջրային ֆոնդի հողեր | 39.02 | 116.80 |
| 11. | հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ | - | 3244.73 |
| 12. | Այլ բնակավայր (գ. Գագարին) | | - |

Տեղեկատվություն համայնքի բազմաբնակարան շենքերի վերաբերյալ

| | | քանակը, հատ | ընդհանուր բնակելի մակերեսը, մ2 |
|---|---|---|---|
| 1 | Ընդամենը բնակարաններ | 5884 | 272562.92 |
| 2 | 1 սենյականոց բնակարաններ | 1623 | 53451.76 |
| 3 | 2 սենյականոց բնակարաններ | 1839 | 74710.33 |
| 4 | 3 սենյականոց բնակարաններ | 1841 | 93239.06 |
| 5 | 4 և ավելի սենյականոց բնակարաններ | 574 | 50516.97 |

Համայնքի բազմաբնակարան շենքերի բաշխվածությունն ըստ կառուցման ժամանակահատվածի.

| | | շենքերի քանակը, հատ | դրանցում բնակարանների քանակը, հատ | ընդհանուր բնակելի մակերեսը, մ2 |
|---|---|---|---|---|
| 1 | մինչև 10 տարի առաջ կառուցված | 0 | | |
| 2 | 11-20 տարի առաջ կառուցված | 0 | | |
| 3 | 21-50 տարի առաջ կառուցված | 213 | 5884 | 272562.92 |
| 4 | 50 և ավելի տարի առաջ կառուցված | 0 | | |

2.3 *Համայնքային ծրագրերը*

**Համայնքի վարչական տարածքում պետության կողմից առաջիկա 5 տարիների համար նախատեսվող /շարունակվող/ հանրապետական, մարզային ծրագրերը և միջոցառումները**

✓ <u>Համայնքում և մարզում արտադրվող ապրանքների Էքսպո-ցուցահանդեսի անցկացում</u>

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններից մեկը փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն է, որի հենքի վրա բարելավվելու է գործարար միջավայրը: Ներկայումս համայնքում չեն իրականացվում այնպիսի միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան ընդհանուր պատկերացում ունենալ արտադրական ներուժի, առկա շուկաների վերաբերյալ: Նշված ծրագրի իրականացմամբ ի մի է բերվելու արտադրական ողջ պոտենցիալը, միմյանց են հանդիպելու արտադրողն ու սպառողը, որոնց շնորհիվ ստեղծվելու են նոր աշխատատեղեր, հիմնվելու են նոր արտադրություններ, ընդլայնվելու են արդեն իսկ գործող արտադրությունների ծավալները, արտերկրի գործընկերների հետ մշակվելու են արտահանման և ներմուծման ծրագրեր:

✓ <u>Գործարարության արդի հիմնախնդիրները, ոլորտային մարտահրավերները և հեռանկարները» համաժողովի անցկացում</u>

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններից է գործարար միջավայրի բարելավումը, որը հնարավորություն կտա ապահովել ներդրումային ծրագրերի հոսքը: Համաժողովի աշխատանքներին մասնակցելու են տեղացի և արտերկրի գործարարները, որոնք ներկայացնելու են ոլորտային հիմնախնդիրները, լուծման ուղիները, այն ծրագրերը, որոնք լինելու են արդյունավետ երկուստեք: Համաժողովի ընթացքում կնքվելու են նախնական համաձայնագրեր, որոնք թույլ կտան ներկրելու և արտահանելու պահանջարկ վայելող որոշ արտադրատեսակներ, ինչպես նաև համատեղ արտադրություններ հիմնելու առաջարկներ կմշակվեն:

✓ <u>Սևանի թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում</u>

Սևանի թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզը գործում է 30 տարուց ավելի և այդ ընթացքում հիմնանորոգում չի իրականացվել, կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, որոնք բավարար չեն: Մանկապարտեզի շենքը տիպային է, նախատեսված 320 երեխայի համար, սակայն ներկայումս հաճախում է 95 երեխա, որի պատճառներից 1-ինը շենքային ոչ բավարար պայմաններն են: Մանկապարտեզի շենքի հիմնանորոգմամբ և կահավորմամբ հնարավորություն կստեղծվի բեռնաթափելու հարակից երկու մանկապարտեզները, միաժամանակ կստեղծվի հարմարավետ և անվտանգ միջավայր: Ծրագրի իրականացումը համայնքի բյուջեի միջոցներով հնարավոր չէ, համայնքը կարող է համաֆինանսավորել ծրագիրը: Նմանատիպ հաջողված ծրագրերը առկա են՝ թիվ 4 «Գալիք», թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից:

✓ <u>Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում կամ ամրացում</u>

Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցը համայնքի մշակութային այն եզակի օջախներից է, որը երաժշտական կրթությանը զուգահեռ պատրաստում է նաև երաժշտասեր լսարան:

Դպրոցի շենքային պայմանները, մինչ շենքի վթարայնությունն էլ, եղել են ոչ բավարար, քանի որ դպրոցը գործում է հարմարեցված մասնաշենքում /նախկին մանկապարտեզ/:

Հիմնանորոգելով դպրոցի շենքը՝ այդ ընթացքում հնարավոր է կատարել նաև լսարանների ավելացման, համապատասխան չափանիշներին հարմարացնելու աշխատանքներ, որը հնարավորություն կտա ունենալ հարմարավետ և անվտանգ միջավայր:

Ծրագրի իրականացումը համայնքային բյուջեի միջոցով հնարավոր չէ, պետք է դիմել դոնոր կազմակերպությունների:

✓ Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողական վարձավճարների զրոյացում (անվճար)

Համայնքում գործում է 5 մանկապարտեզ, որտեղ սահմանված են ծնողական վարձավճարներ. Գագարին գյուղում՝ 2000 դրամ, «Գալիք» մանկապարտեզում՝ 7000 դրամ, մյուս 3 մանկապարտեզներում՝ 6000-ական դրամ: Վերջին բարձրացումը ծնողական վճարների եղել է 2015թ-ին: Նախադպրոցական տարիքի երեխա ունեցող ոչ բոլոր ընտանիքներն են ի վիճակի վճարելու անհրաժեշտ գումարը, մանավանդ եթե մանակպարտեզ է հաճախում նույն ընտանիքից մեկից ավելի երեխա: Ծրագրի իրականացմամբ, որը կատարվելու է համայնքային բյուջեի հաշվին, ծնողներին հնարավորություն կտրվի օգտվելու մանկապարտեզների ծառայություններից, իսկ երեխաներին՝ հավասար մեկնարկային պայմաններ դպրոց հաճախելու համար:

✓ Գրադարանային համակարգի վերազինում

Վ. Ստեփանյանի անվան գրադարանների կենտրոնացված համակարգը 2014թ-ին ստացել է հանրային գրադարանի կարգավիճակ, որը ենթադրում է գործունեության նոր որակ և հեռանկարներ: Գրադարանի բնականոն գործունեության համար անհրաժեշտ է տեխնիկական միջոցների ներգրավում, ինչի շնորհիվ կավելանան և այցելուների թիվը, և կգրանցվեն ոլորտային բարեփոխումներ: Տեխնիկական վերազինումն ապահովելու համար ակնկալվում է մշակույթի նախարարության աջակցությունը:

✓ Սևան քաղաքի հայորդաց տան հիմնանորոգում

Սևան քաղաքի բանուկ թաղամասերից մեկում տասնամյակներ առաջ գործել է մշակույթի տուն, որը ազատ ժամանցի և մշակութային կյանքի կազմակերպման համար եղել է լավագույն վայր: Անցյալ դարի 90-ականներից այն դադարել է գործելուց, որի արդյունքում շենքը մատնվել է անգործության, շարքից դուրս են եկել կոմունիկացիաները: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դաստիարակչական կենտրոնը շենքը վերցրել է իր հաշվեկշռում և կատարել տանիքի վերանորգման աշխատանք: Համաձայն դաստիարակչական կենտրոնի ծրագրերի՝ շենքում պետք է գործեր հայորդաց տուն, սակայն համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ծրագիրը կյանքի չկոչվեց: Բարերարների առկայության դեպքում հնարավոր է հիմնանորոգել շենքը, որը լիովին կծառայի իր նպատակին համապատասխան մարզական և մշակութային խմբակներով: Հայորդաց տան գործունեությամբ կլուծվի թաղամասի երեխաների զբաղվածության, արտադպրոցական առօրյան կազմակերպելու խնդիրը:

✓ Մարզամշակութային փառատոնների անցկացում

Համայնքային կյանքի, միջհամայնքային կապերի ակտիվացմանը նպաստող գործոններից են մարզամշակութային փառատոների անցկացումը, որը բացահայտում է նաև տաղանդավոր երեխաներին և երիտասարդներին, առաջացնում է հետաքրքրություն համայնքի նկատմամբ, մեծացնում զբոսաշրջային հոսքերը: Ծրագրի իրականացման ընթացքում արդեն ավանդույթ

դարձած միջոցառումներին կգան լրացնելու որակապես և թեմատիկ առումով նորերը, որոնց շնորհիվ կմեծանա մասնակիցների և հանդիսատեսի թիվը:

✓ Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի մարզական գույքի ձեռքբերում

Մարզադպրոցում պարապմունքների բնականոնությունն ապահովելու համար զգացվում է մարզագույքի որոշ տեսակների կարիք, որոնց լրացմամբ կմեծանան պարապմունքների արդյունավետությունը, կավելանա հաճախող երեխաների թիվը: Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ըմբշամարտի մարզագորգի, ծանրաձողերի, ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի խմբերի պարապմունքներն ապահովող մարզագույքի ձեռքբերում:

✓ Տանիքաշինություն

Համայնքում կա 213 բազմաբնակարան շենք, որոնցից ամենաերիտասարդը կառուցվել է 80-ական թվականներին: Շենքերում առկա մի շարք հիմնախնդիրների կողքին զգացնել է տալիս տանիքների անմխիթար վիճակը, որը ստեղծում է բազմաթիվ անհարմարություններ հատկապես վերջին հարկերում բնակվողների համար: Անցած տարիների ընթացքում ներքին պետական դրամաշնորհների շնորհիվ հնարավոր է եղել հիմնանորոգել 14 տանիք: Առաջիկայում ևս նախատեսված է տանիքների հիմնանորոգման ծրագիրը, որը համայնքային բյուջեի միջոցներով հնարավոր չէ իրականացնել: Պետության կողմից տրվող նպատակային հատկացումների որոշ մասը պետք է ուղղվի տանիքաշինությանը:

✓ Շենքերի սեյսմակայունության բարձրացում, ամրացում

Համայնքում կա 2013 բազմաբնակարան շենք, որոնցից մեծ մասն ունի մի շարք խնդիրներ: Դրանցից 4-ը մասնագիտական համապատասխան եզրակացությամբ ճանաչվել է վթարային, որը, սակայն քանդման ենթակա չէ: Գյուղ Գագարին, Գայի 1, ք. Սևան, Սայաթ-Նովա 19, Խաղաղության 16, Նաիրյան 4 շենքերի հետագա պահպանումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել ամրացման աշխատանքներ, որը համայնքային բյուջեի միջոցներով հնարավոր չէ: Խնդրահարույց է նաև գ. Գագարին, Բաղրամյան 1 շենքի առկա վիճակը. շենքը չունի կոյուղագիծ, որի պատճառով կեղտաջրերը լցվում են շենքի նկուղ՝ ստեղծելով ոչ միայն հակահիգիենիկ վիճակ, այլ նաև թուլացնելով շենքի հիմքերը: Հրատապ է Բաղրամյան 1 շենքի հիմքերի ամրացման աշխատանքների իրականացումը:

✓ Համայնքի կանաչ գոտիների գույքագրում, կանաչապատում և ծառատնկում

Սևանը ներկայացնում է մեծ հետաքրքրություն զբոսաշրջային տեսանկյունից, որն էլ իր հերթին ներառում է բնապահպանական մի շարք խնդիրներ: Ներկայումս համայնքում առկա է 71.99հա կանաչ տարածք: Համաձայն գլխավոր հատակագծի՝ այն պետք է հասցնել 80.95հա-ի՝ նոր կանաչ տարածքների ավելացման հաշվին: Կանաչ տարածքների ավելացմանը զուգահեռ, որը ներառում է թփապատում, ծառատնկում, իրականացվելու են արդեն եղած տարածքների գույքագրման, դրանց մշակման, ձևավորման և պահպանման աշխատանքներ:

✓ Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տեխնապարկի վերազինում

Ծրագրի առանցքում աղբահանության խնդիրների կարգավորումն է: Ծրագիրն ունի մի քանի բաղադրիչ և հեռահար նպատակներ, որն ընդգրկում է բնապահպանական և սոցիալական

գործողություններ, նոր աղբավայրի շահագործում, մաքրության ծառայությունների դիմաց վճարների հավաքագրման նոր մեխանիզմներ, նոր և ժամանակակից տեխնիկայի, մասնագիտացված սարքավորումների տրամադրում:
2015թ. ծրագրի շրջանակներում կնքվել է համապատասխան պայմանագիր, կատարվել է նախապատրաստական գործողություններ, մշակվել են հետագա քայլերն ու աշխատանքների տեխնիկական բաղադրիչները: Այս ծրագրի իրականացմամբ համայնքը հնարավորություն կունենա աղբահանության ոլորտում գրանցել լուրջ ձեռքբերումներ՝ և տեխնիկապես, և աշխատանքների որակական բարելավման առումներով:

✓ <u>Գիշերային լուսավորության ցանցի շահագործում</u>

Վերջին տարիներին իրականացվել է գիշերային լուսավորության ցանցի ընդլայնման ծրագրեր, անգամ՝ էներգախնայող ռեժիմով, սակայն համայնքի փողոցների մեծ մասը լուսավորված չէ: Այս հիմնախնդրի պատճառով առաջանում են մի շարք խոչընդոտներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ չլուսավորվող փողոցներում առկա են հենասյուններ, անհրաժեշտ է կատարել գույքագրում, ճշտել դրանց պիտանելիությունը: Ծրագրի ընթացքում նախատեսվում է ևս 14 փողոց ապահովել գիշերային լուսավորությամբ:

✓ <u>Գագարին գյուղի ջրահեռացման ցանցի և ջրամբարի բաշխիչ ցանցի կառուցում, բարելավում</u>

Հիմնախնդիրը Գագարինում գյուղում առկա է վաղուց, որը խոչընդոտում է բնակիչների կենսական խնդիրների լուծմանը: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից տեղում ուսումնասիրվել է հիմնախնդիրը և ներառվել 2017թ. ծրագրերում: Ծրագրի իրականացման շնորհիվ կբարձրացվի համակարգի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը, կբարելավվի ծառայության որակը, կվերակառուցվի կոյուղացման համակարգը: «Ջինջ» ՍՊԸ-ի կողմից կատարվել են նախագծա-նախահաշվային աշխատանքները, և ծրագիրը թևակոխել է հաջորդ փուլ:

✓ <u>Սևան քաղաքի ջրահեռացման համակարգի բարելավում</u>

Սևան քաղաքում տարիներ շարունակ հիմնախնդիր է համարվում ջրահեռացման ցանցի ոչ բարվոք վիճակը, որի պատճառով ժամանակ առ ժամանակ ստեղծվել է հակասանիտարական վիճակ, որն ուղղակիորեն բացասական է անդրադառնում շրջակա միջավայրին և բնակիչների առողջությանը: «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից տեղում ուսումնասիրվել է հիմնախնդիրը և ներառվել 2017թ. ծրագրերում: Ծրագրի իրականացման շնորհիվ կբարձրացվի համակարգի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը, կբարելավվի ծառայության որակը, կվերակառուցվի կոյուղացման համակարգը: «Ջինջ» ՍՊԸ-ի կողմից կատարվել են նախագծա-նախահաշվային աշխատանքները, և ծրագիրը թևակոխել է հաջորդ փուլ:

✓ <u>Արևային էներգիայի համակարգերի տեղադրում</u>

Համայնքում, Սևան-Գրենոբլ համագործակցության շրջանակներում, իրականացվում է «ֆինանսավորում վերականգնվող էներգիաների ոլորտում» ծրագիրը:
Ծրագրի ներդրման համար հիմք են հանդիսացել մի շարք բնական գործոններ: Արևային օրերի քանակով Սևանն ամենաարևայիններից է՝ 265-270 օր: Հաշվի առնելով կլիմայական այս

իրողությունը և այլընտրանքային էներգիայի ստացման նկատմամբ համաշխարհային միտումները՝ Սևան-Գրենոբլ ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում ներառվել է նաև վերականգնող էներգետիկայի ոլորտը: Պիլոտային ծրագրերին զուգահեռ իրականացվում է 3 տարվա ընթացքում վերադարձելիության սկզբունքով գործող ֆինանսավորման ծրագիրը, որի շրջանակներում սեփական առանձնատներում և բնակարաններում տեղադրվել և տեղադրվելու են արևային ջրատաքացուցիչներ և ջեռուցման համակարգ: Առանձնատներին զուգահեռ ծրագիրը իրականացվում է նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների շենքերում: Ըստ առաջնահերթության ընտրվել է թիվ 3 «Հեքիաթ» մանկապարտեզը և մարզադպրոցը, որտեղ տեղադրվելու են ջրատաքացուցիչներ ֆրանսիացի գործընկերների ֆինանսավորմամբ Արփի Սոլար ընկերության միջոցով: Գործընթացը լինելու է շարունակական:

✓ <u>ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ուսումնառող քաղաքներ» ցանց</u>

2015թ. համայնքը միացել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ուսումնառող քաղաքներ» ցանցին, որի նպատակն է փորձի փոխանակման, այլ երկրներում առկա կրթական արդյունավետ մեթոդների ներդրմամբ համայնքում իրականացնել կրթական բարեփոխումներ: Ծրագրի ընթացքում նախատեսվում են մասնակցություն միջազգային համաժողովներին և աշխատաժողովներին, համապատասխան թեմաների շուրջ ելույթների նախապատրաստում, քննարկումներ, առկա լավագույն փորձի ներդրում համայնքում:

✓ <u>Կոնֆերենս-դահլիճի հիմնանորոգում և կահավորում</u>

Համայնքային միջոցառումների, հանդիպումների, ավագանու նիստերի, մամուլի ասուլիսների անցկացման համար չկա այդ նպատակով առանձնացված, հարմարեցված և կահավորված տարածք: Այդպիսի դահլիճի բացակայության պատճառով հաճախ շատ միջոցառումներ չեն ծառայել իրենց նպատակին, տուժում է կազմակերպված աշխատանքների որակական կողմը: Խիստ անհրաժեշտություն է առաջացել ունենալ կոնֆերենս-դահլիճ՝ համապատասխան կահավորմամբ և վերազինմամբ, որն իրականացվելու է համայնքի ֆինանսական ներդրմամբ և ներքին դրամաշնորհների միջոցով:

✓ <u>Ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում երիտասարդների փոխանակում</u>

Սևանի և քույր քաղաքների միջև ստորագրված Հուշագրի ուղղություններից մեկը՝ երիտասարդների փոխանակումը, լիովին արդարացված է և նպատակային: Փոխայցելությունների արդյունքում ձևավորվում է նոր մշակույթ, իրականացվում են բազմաթիվ նախաձեռնություններ, երիտասարդների համար ուսումը շարունակելու նոր հեռանկարներ են ուրվագծվում: Համայնքն այդ ուղղությամբ արդեն իսկ ունի հաջողված օրինակներ, որոնք ունենալու են շարունակություն ճանաչողական, մշակութային, կրթական հարթություններով:

✓ <u>Հասցեական սոցիալական օժանդակություն</u>

Համայնքում բնակվող անձանց վերաբերյալ տվյալների վերլուծությունը փաստում է, որ քիչ չեն սոցիալական բազմաբնույթ խնդիրներ ունեցող անձինք և ընտանիքները: Այդ մարդկանց նկատմամբ անհրաժեշտ է հասցեական ճիշտ քաղաքականություն իրականացնել, որի արդյունքում սոցիալական լարվածության մեղմացում կնկատվի: Սոցիալական օգնության մի

բաղադրիչն էլ ֆինանսական աջակցությունն է, որը ներառված է համայնքային բյուջեում: Ելնելով համայնքի ֆինանսական առկա հնարավորություններից՝ սոցիալական աջակցությանն ուղղված գումարների նկատմամբ պետք է սահմանվի վերահսկողություն, աջակցությունը պետք է տրամադրվի նպատակային և ըստ անհրաժեշտության:

- ✓ <u>Բարեգործական ակցիաների կազմակերպում</u>

Համայնքային մի շարք հիմնախնդիրների լուծման համար չեն բավարարում ֆինանսական ռեսուրսները: Սակայն այդ խնդիրները հրատապ են և ունեն լուծման կարիք: Համայնքն ունի փորձ բարեգործական միջոցներով իրականացվող համայնքային նշանակության խնդիրների լուծման գործում /քաղաքային պանթեոն, բազմաֆունկցիոնալ մարզահրապարակ, Վլ. Կարապետյանի անվան կիսանդրու պատրաստում՝ հեռուստամարաթոնի միջոցով/, անհատ բարերարների կողմից ևս իրականացվել են համայնքային նշանակության մի շարք խնդիրներ կրթական և մշակութային հաստատություններում, ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ: Եղած փորձը համակարգելով և օգտագործելով բարեգործության ոլորտում առկա գործիքները՝ առաջիկայում նախատեսված են իրականացնել բարեգործական մի շարք ակցիաներ՝ ներգրավելով նաև արտերկրի գործընկերներին, Սևանից հեռու ապրող սևանցիներին: Հանգանակությունների միջոցով հնարավոր կլինի լուծել սոցիալական, նշանակության մի շարք հարցեր, բարելավել համայնքային ենթակառուցվածքները՝ դրանով իսկ նպաստելով սոցիալական համերաշխության հաստատմանը, առկա գումարների ճիշտ տնօրինմանը:

- ✓ <u>Աջակցություն սոցիալական ձեռնարկատիրությանը</u>

Համայնքում կա հաջողված փորձ սոցիալական ձեռնարկատիրության գործունեության, որը լուծել է մի քանի խնդիր՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերապատրաստում, աշխատանքով ապահովում, հրուշակեղենի արտադրամասի հիմնում: Հետևելով արդեն առկա ձեռնարկին՝ համայնքում իրականացվելու են սոցիալական աջակցման ծրագրեր, որոնց առանցքում լինելու են սոցիալական ձեռնարկատիրությունների ստեղծումը: Այդ նպատակի համար համայնքը համագործակցելու է տեղական և դոնոր կազմակերպությունների հետ:

- ✓ <u>ՏԻՄ-ում մարդկային ռեսուրսների կառավարման նոր գործիքների ներդրում</u>

Համայնքների ապակենտրոնացման հիմքում նաև տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացման անհրաժեշտությունն է, որը մատուցվող ծառայությունների որակի բարելավմանն է միտված: Գործող պաշտոնի անձնագրերը և հաշվետվության ձևերը չեն կարող լիովին արտացոլել աշխատակիցներից պահանջվող կարողություններն ու հմտությունները, միաժամանակ նրանց կատարողականի գնահատումը: Ներդնելով համայնքային ծառայողների և հայեցողական պաշտոններ ունեցողների պաշտոնի նոր անձնագրեր, որակավորման մասնագրեր, կատարողականի գնահատման ձևաչափեր՝ հնարավորություն կընձեռվի կատարել մարդկային ռեսուրսների ճիշտ ընտրություն, կբարձրացվի աշխատանքի որակը, կսահմանվեն նոր պահանջներ և նոր մոտեցումներ, կհստակեցվեն յուրաքանչյուր աշխատակցի դերը աշխատավայրում:

- ✓ <u>Գետի հունի և սելավատարի մաքրում</u>

Սևան-Հրազդան կոլեկտորը անցնում է Գեղամավան-Ծաղկունք-Դդմաշեն-Ջովաբեր գյուղերի վարչական տարածքներով: Կոլեկտորը վթարային է, որի պատճառով Գեղամավանի և

Ծաղկունքի վարչական տարածքներից կեղտաջրերը ամբողջովին լցվում են Հրազդան գետի նախկին հունը, ինչն էլ ստեղծում է հակասանիտարական իրավիճակ: Ուստի անհրաժեշտություն է դարձել գետի հունի մաքրումը, սելավատարի մաքրումը և կեղտաջրերի հեռացումը: Գետի հունի և սելավատարի մաքրումը կնպաստեն ինչպես համայնքում շրջակա միջավայրի պահպանմանը, այնպես էլ արտագարգ իրավիճակներում /հեղեղումներ, սելավներ.../ վտանգների նվազմանը և բնակչության պաշտպանվածությանը:

✓ <u>Ներբնակավայրային փողոցների բարեկարգում և մասնակի ասֆալտապատում և միջդաշտային ճանապարհի փոսալցում</u>

Դդմաշեն գյուղի ներբնակավայրային ճանապարհները գտնվում են ոչ բարվոք վիճակում, որը դժվարացնում է մաղկանց և ավտոմեքենաների տեղաշարժը:

Ներբնակավայրային ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է ներբնակավայրային փողոցների բարեկարգում և մասնակի ասֆալտապատում, ինչպես նաև միջդաշտային ճանապարհի փոսալցում:

✓ <u>Դդմաշեն գյուղի 1.89 հա տարածք զբաղեցնող բաց գերեզմանատան ցանկապատի վերականգնում</u>

20-րդ դարի սկզբներին հիմնված Դդմաշեն գյուղի գերեզմանատունը զբաղեցնում է 1.89 հա տարածք, որն ընդարձակելու հնարավորություն չկա: Գերեզմանատան տարածքը նախկինում որոշակի չափով ցանկապատվել է, սակայն տարիների ընթացքում ցանկապատի որոշ հատվածներ քանդվել և շարքից դուրս են եկել: Ներկայումս խիստ անհրաժեշտ է վերականգնել գերեզմանատան արևելյան և հարավային հատվածի շուրջ 150 մ. հատված:

✓ <u>Դդմաշեն գյուղի բաց գերեզմանատան ցանկապատում</u>

Գերեզմանատունը հիմնվել է 1971 թվականին: 2000թ. քարտեզագրման ժամանակ այն զբաղեցրել է 3.89 հա տարածք, որն ունի ընդարձակելու հնարավորություն, որն էլ հաստատվել է Դդմաշեն գյուղի գլխավոր հատակագծով:

Գերեզմանատան ցանկապատը նպաստում է գերեզմանատան զբաղեցրած տարածքի, շրջակա բնական միջավայրի պահպանությանը, սանիտարական գոտու պահպանմանը և խնամքին: Ցանկապատը նախատեսված է իրականացնել նաև ընդարձակված տարածքի համար:

✓ <u>Սուրբ Թադեոս Եկեղեցու վերանորոգում</u>

Դդմաշեն գյուղում է գտնվում սուրբ Թադևոս եկեղեցին, որը կառուցվել է 7-րդ դարում: Եկեղեցին ներկայումս չի գործում: Տեղումների /ձյուն, անձրև, կարկուտ/ ինչպես նաև քամիների հետևանքով շարքից դուրս է եկել գմբեթը և տանիքը, անձրևաջրերը թափանցելով ներս, քայքայում են եկեղեցու պատերը: Ունի հիմնանորոգման և տարածքի բարեկարգման խնդիր: *Առաջնային անհրաժեշտություն է գմբեթի, թմբուկի և տանիքի վերանորոգումը, որի ժամանակ հնարավոր է նաև պատերի մասնակի ամրակայում, ինչպես նաև ցանկապատի վերականգնումը*:

✓ <u>Անտառների հիմնում և կանաչ գոտիների ստեղծում</u>

Քանի որ Դդմաշեն գյուղը չունի անտառածածկ գոտի և սակավ են նաև կանաչապատ տարածքները, ուստի խիստ անհրաժեշտ է կանաչ գոտիների ստեղծումը: Դրա համար պետք է

կազմակերպել ծառատունկ համայնքի տարբեր տարածքներում: Դդմաշենի գլխավոր հատակագծով նախատեսվել է հիմնել մոտ 70 հա տարբեր բնույթի կանաչ գոտիներ:

✓ <u>Հանդիսությունների սրահի գույքի ձեռքբերում</u>

Դդմաշեն գյուղում խիստ անհրաժեշտություն է հանդիսությունների սրահ ունենալը: Հանդիսություններ, ինչպես նաև սգո արարողություններ կազմակերպելու համար բնակիչներն օգտվում են Սևան կամ Հրազդան քաղաքների տարածքներում գործող ռեստորանային համալիրների ու նմանատիպ այլ օբյեկտների ծառայություններից, ինչը շատ անգամներ առաջացնում է ավելորդ ֆինանսական և կազմակերպչական խնդիրներ ու դժվարություններ: Հանդիսությունների սրահի հիմնանորոգումը կապված է ֆինանսական մեծ ծախսերի հետ, ուստի նպատակահարմար էր այն իրականացնել փուլերով:

Ծրագրի 3 փուլերով **<u>ամբողջովին</u>** վերանորոգվել է հանդիսությունների սրահի շենքի երկու հարկերը: Ծրագրի 4-րդ փուլով /ներկայացվում է առանձին հայտով/ նախատեսվում է հանդիսությունների սրահի հարակից տարածքի՝ շուրջ 1500քմ բարեկարգում /այդ թվում՝ ասֆալտապատում, սալապատում/, որի հիմնական մասը ծառայելու է որպես ավտոկայանատեղի, ցանկապատում՝ շուրջ 420 գծամետր՝ 1.5մ բարձրությամբ:

Այս փուլով նախատեսվում է գույքի ձեռքբերում, մասնավորապես՝ էլեկտրական սարքավորումներ, կահույք, սպասք և այլ պարագաներ:

✓ <u>Հանդիսությունների սրահի հիմնանորոգում 4-րդ փուլ /տարածքի ցանկապատում և բարեկարգում</u>

Դդմաշեն գյուղում խիստ անհրաժեշտություն է հանդիսությունների սրահ ունենալը: Հանդիսություններ, ինչպես նաև սգո արարողություններ կազմակերպելու համար բնակիչներն օգտվում են Սևան կամ Հրազդան քաղաքների տարածքներում գործող ռեստորանային համալիրների ու նմանատիպ այլ օբյեկտների ծառայություններից, ինչը շատ անգամներ առաջացնում է ավելորդ ֆինանսական և կազմակերպչական խնդիրներ ու դժվարություններ: Հանդիսությունների սրահի հիմնանորոգումը կապված է ֆինանսական մեծ ծախսերի հետ, ուստի նպատակահարմար էր այն իրականացնել փուլերով: Ծրագրի 3 փուլերով **<u>ամբողջովին</u>** վերանորոգվել է հանդիսությունների սրահի շենքի երկու հարկերը:
4-րդ փուլով նախատեսվում է հանդիսությունների սրահի տարածքի՝ շուրջ 1500քմ բարեկարգում /այդ թվում՝ ասֆալտապատում, սալապատում/, որի հիմնական մասը ծառայելու է որպես ավտոկայանատեղի: Հանդիսությունների սրահի ու կուլտուրայի տան ընդհանուր ցանկապատում՝ շուրջ 420 գծամետր՝ 1.5մ բարձրությամբ:

✓ <u>Հացահատիկահավաք նոր կոմբայնի ձեռքբերում</u>

Դդմաշեն բնակավայրն ունի 1 հացահատիկահավաք կոմբայն, որն արդեն շարքից դուրս է եկել և օգտագործման համար պիտանի չէ: Ուստի խիստ անհրաժեշտություն է առաջացել նոր հացահատիկահավաք կոմբայնի ձեռքբերումը, որը կխթանի հացահատիկային կուլտուրաների մշակմանը:

✓ <u>Մշակույթի տան հիմնանորոգում և գույքի ձեռքբերում</u>

Դդմաշեն գյուղի մշակույթի տունը կառուցվել է 1984 թվականին: Մինչև օրս վերանորոգում և նոր գույքի ձեռքբերում հնարավոր չի եղել, բացառությամբ տանիքի և մուտքի դռների, որոնք փոխվել են 2008 թվականին՝ պետական բյուջեի միջոցներով: Տարիների ընթացքում նախկինում եղած գույքն էլ շարքից դուրս է եկել Ուստի խիստ անհրաժեշտություն է մշակույթի տան շենքի

/ներառյալ՝ գրադարանի/ հիմնանորոգումը նոր գույքի ձեռքբերումը, որը կնպաստի բնակչության շրջանում կուլտուր-կենցաղային առօրյան նորմալ կազմակերպելու, ինչպես նաև տարատեսակ խմբակների ու միջոցառումների կազմակերպմանը:

- ✓ Ոռոգման ջրի պատվարի, արտաքին ջրատարի և ցանցի կառուցում

Դդմաշեն գյուղում անհրժեշտ է կառուցել ոռոգման ջրի պատվար, արտաքին ջրատար և ցանց, որը խթան կհանդիսանա հողագործության զարգացման համար:

- ✓ Ջրահեռացման նոր համակարգերի կառուցում

Դդմաշեն գյուղում խիստ անհրաժեշտություն է առաջացել ջրահեռացման նոր համակարգերի կառուցումը:

- ✓ Սպորտային և մանկական խաղահրապարակների ստեղծում

Դդմաշեն գյուղում մինչև այժմ չկան սպորտային և /կամ բակային տարածքներ՝ երեխաների և երիտասարդության ժամանցն անցկացնելու համար: Սպորտային և մանկական խաղահրապարակների հիմնումը հնարավորություն կտա կազմակերպելու սպորտային տարաբնույթ խմբակներ և միջոցառումներ, ինչպես նաև երեխաների՝ ազատ և հաճելի ժամանց անցկացնելուն: Դրա համար անհրաժեշտ է կուլտուրայի տան հարավային մասում կառուցել վոլեյբոլի դաշտ և մանկական խաղահրապարակ, որտեղ տեղակայված կլինեն կարուսելներ և մանկական խաղային սարքավորումներ՝ բովանդակալից ազատ ժամանց կազմակերպելու համար:

- ✓ Փողոցների արտաքին լուսավորության ընդարձակում

Անիրաժեշտ է ընդարձակել Դդմաշեն բնակավայրի փողոցների արտաքին լուսավորությունը, որը կնպաստի երեկոյան ժամերին մարդկանց ազատ տեղաշարժին:

- ✓ Ճանապարհների ասֆալտապատում Լճաշեն բնակավայրում

Ծրագիրը ընդգրկում է համայնքի փողոցների տարբեր հատվածներ, վերանորոգումից հետո այն կնպաստի համայնքի բնակչության անվտանգ տեղաշարժին և ավտոմեքենաների անխափան ընթացքին:

- ✓ Լճաշենի մարզադաշտի կապիտալ վերանորոգում

Ծրագիրը ընդգրկում է համայնքի մարզադաշտի տրիբունայի, դաշտի և ամբողջ տարածքի վերանորոգումը, ամրացման աշխատանքները:

| 2832 | 08 | 3 | 2 | Հրատարակչություններ, խմբագրություններ | 32446.0 | 32446.0 | |
| 2833 | 08 | 3 | 3 | Տեղեկատվության ձեռքբերում | | | |
| 2840 | 08 | 4 | 0 | *Կրոնական և հասարակական այլ ծառայություններ* | 3220.0 | 3220.0 | |
| | | | | որից` | | | |
| 2841 | 08 | 4 | 1 | Երիտասարդական ծրագրեր | | | |
| 2842 | 08 | 4 | 2 | Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ | 3220.0 | 3220.0 | |
| 2843 | 08 | 4 | 3 | Կրոնական և հասարակական այլ ծառայություններ | | | |
| 2850 | 08 | 5 | 0 | *Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ* | | | |
| | | | | որից` | | | |
| 2851 | 08 | 5 | 1 | Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | | | |
| 2900 | 09 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+տող2970+տող2980) | 393555.9 | 380000.0 | 13555.9 |
| | | | | այդ թվում` | | | |
| 2910 | 09 | 1 | 0 | *Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն* | 276746.3 | 266000.0 | 10746.3 |
| | | | | որից` | | | |
| 2911 | 09 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | 276746.3 | 266000.0 | 10746.3 |
| 2912 | 09 | 1 | 2 | Տարրական ընդհանուր կրթություն | | | |
| 2920 | 09 | 2 | 0 | *Միջնակարգ ընդհանուր կրթություն* | 2809.6 | | 2809.6 |
| 2922 | 09 | 2 | 2 | Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն | 2809.6 | | 2809.6 |
| 2950 | 09 | 5 | 0 | *Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն* | 114000.0 | 114000.0 | |
| | | | | որից` | | | |
| 2951 | 09 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | 114000.0 | 114000.0 | |
| 2952 | 09 | 5 | 2 | Լրացուցիչ կրթություն | | | |
| 2960 | 09 | 6 | 0 | *Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ* | | | |
| | | | | որից` | | | |
| | | | | որից` | | | |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող3010+տող3020+տող3030+տող3040+տող3050+տող3060+տող3070+տող3080+տող3090) | 23910.0 | 23910.0 | |
| 3030 | 10 | 3 | 0 | *Հարազատին կորցրած անձինք* | 500.0 | 500.0 | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3031 | 10 | 3 | 1 | Հարազատին կորցրած անձինք | *500.0* | *500.0* | |
| 3040 | 10 | 4 | 0 | *Ընտանիքի անդամներ և զավակներ* | 0.0 | 0.0 | |
| 3070 | 10 | 7 | 0 | *Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)* | 23410.0 | 23410.0 | |
| | | | | որից` | | | |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 23410.0 | 23410.0 | |
| 3080 | 10 | 7 | 1 | ***Վարձատրվող հասարակական աշխատանքներ*** | 0.0 | 0.0 | |
| | | | | որից` | | | |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110) | 307370.0 | 310314.9 | |
| | | | | այդ թվում` | | | |
| 3110 | 11 | 1 | 0 | *ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ* | 307370.0 | 310314.9 | |
| | | | | որից` | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 307370.0 | 310314.9 | |

### 2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի բնականոն կյանքի ապահովումը և տնտեսության զարգացումը խոչընդոտող մի շարք խնդիրներ ունեն իրենց պատճառահետևանքային կապը, որի պատճառով էլ շատ ծրագրեր և ձեռնարկներ չեն ստանում լուծում կամ կյանքի չեն կոչվում.

| Հիմնական խնդիրներ | պատճառ | հետևանք |
|---|---|---|
| Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում | օրենսդրական դաշտ<br>համախմբվածության պակաս<br>շուկայի ոչ թափանցիկություն<br>գործարար հմտությունների և գիտելիքների պակաս<br>իրազեկման պակաս<br>ներդրումային ծրագրերի ֆինանսական դժվարություններ<br>վարկերի բարձր տոկոսադրույքներ | տնտեսությունը զարգացած չէ<br>արտադրական ձեռնարկությունների սակավություն<br>գնաճ<br>աշխատատեղերի փոքր թվաքանակ |
| Համայնքի գույքի կառավարում | տեղեկատվության պակաս<br>կառավարչական հմտությունների պակաս | արդյունավետության բացակայություն |
| Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում | շենքային պայմաններ<br>աշխատակիցների աշխատավարձի ցածր դրույքաչափեր, անվճարունակություն<br>ոլորտի նկատմամբ ոչ պրոֆեսիոնալ մոտեցում | երեխաների ներգրավվածության պակաս<br>արտադպրոցական խմբակների թվաքանակի պակաս<br>գույքի պակաս<br>հետաքրքրության բացակայություն |
| Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ | տարածքների, տեխնիկա-սարքավորումների բացակայություն<br>ծրագրերի պակաս<br>ֆինանսական ռեսուրսների բացակայություն<br>մոտիվացիայի պակաս | համաքաղաքային մարզամշակութային միջոցառումների պակաս<br>անտարբերություն, պասիվություն, ներգրավվածության պակաս, կրկնություններ |

| | | |
|---|---|---|
| Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն | սոցիալական ծրագրերի միօրինակություն և պակաս, ոչ ճիշտ հասցեականություն<br><br>իրազեկության պակաս | աղքատության աճ<br><br>արտագաղթ<br><br>սոցիալական լարվածության աճ<br><br>ամուսնալուծությունների թվի աճ, ծնելիության պակաս |
| Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում | կազմակերպչական աշխատանքների պակաս,<br><br>առողջ ապրելակերպի խրախուսման մեխանիզմների բացակայություն<br><br>ոլորտի նկատմամբ դրական վերաբերմունքի պակաս, անուշադրություն<br><br>ոչ նպատակային աշխատանք | ոլորտի կարևորության չգիտակցում<br><br>երիտասարդների շրջանում հիվանդությունների աճ<br><br>ոչ նպատակային և ձևական միջոցառումների իրականացում |
| Համայնքում բնակարանային շինարարության խթանում | ֆինանսների և համապատասխան տարածքների բացակայություն, ոչ արդյունավետ աշխատանք համապատասխան կառույցների հետ, պահանջատիրության պակաս | ուրբանիզացիայի աճ<br><br>բնակչության թվի նվազում, նորաստեղծ ընտանիքների թվի անկում, ծնելիության թվի նվազում<br><br>վարձակալական բնակարանների պահանջարկի մեծացում |
| Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում, աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում, համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովում | ներդրումային ծրագրերի, տեխնիկայի, ոլորտային մասնագետների պակաս<br><br>մտածելակերպ, համապատասխան տարածքների բացակայություն<br><br>սրտացավության բացակայություն, անպատասխանատվություն<br><br>առկա ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործում<br><br>գործող կարգերի չկիրառում<br><br>աջակցության պակաս | անբարեկարգ, կեղտոտ տարածքներ, կանաչապատ տարածքների պակաս<br><br>աշխատանքների անարդյունավետություն<br><br>անտարբերություն |
| Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում | մասնագիտացված օղակի ոչ լիարժեք աշխատանք<br><br>համայնքային կարիքների | երթուղիների պակաս<br><br>բնակչության դժգոհության աճ |

| | | |
|---|---|---|
| | ոչ ճիշտ գնահատում<br><br>տրանսպորտային միջոցների բացակայություն<br><br>ֆինանսական միջոցների բացակայություն<br><br>ոչ ճիշտ պլանավորում | անբարեկարգ ճանապարհներ<br><br>երթևեկության դժվարացում<br><br>մարդկանց հոսքի պակասում |
| Պետության պաշտպանության իրականացման աջակցում | ոլորտի նկատմամբ տեղեկատվության պակաս<br><br>մասնագիտական հմտությունների պակաս | խնդիրների կատարման ոչ լիարժեքություն |
| Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում | ոչ ճիշտ պլանավորում իրազեկման պակաս<br><br>խնդրի կարևորության չգիտակցում<br><br>համագործակցության բացակայություն<br><br>միջոցառումների ձևական բնույթ | բնակչության անպաշտպան վիճակ<br><br>ծրագրերի թերակատարում |
| Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն | տեղեկատվության ոչ լիարժեքություն<br><br>խնդրի կարևորության չգիտակցում<br><br>անտարբերություն<br><br>համալիր ծրագրերի բացակայություն<br><br>համապատասխան կառույցների միջև համագործակցության բացակայություն | շրջակա միջավայրի նկատմամբ անտարբեր վիճակ<br><br>համապատասխան ծրագրերի բացակայություն<br><br>ոչ ճիշտ մշակույթի ձևավորում |
| Զբոսաշրջության զարգացման խթանում | ենթակառուցվածքների պակաս<br><br>մոտիվացիայի պակաս<br><br>ոչ նպատակային ծրագրեր<br><br>ժամանցի վայրերի բացակայություն<br><br>ցուցանակների և տեղեկատվական վահանակների բացակայություն<br><br>ոլորտային կառույցների միջև ոչ արդյունավետ համագործակցություն | համայնքի գերակա ուղղություն հռչակված զբոսաշրջային ոլորտում հիմնախնդիրների կուտակում<br><br>մասնակի, ոչ լիարժեք ծրագրերի իրականացում<br><br>զբոսաշրջիկների թվի աճի դանդաղ տեմպեր<br><br>ոլորտային ծրագրերի ոչ ամբողջական մշակում<br><br>խնդրի կարևորության չգիտակցում<br><br>համայնքի տնտեսության |

| | | |
|---|---|---|
| | ոչ ճիշտ պլանավորում<br><br>տեղեկատվական աշխատանքների ոչ լիարժեք կազմակերպում<br><br>տուրիստական ծառայությունների պակաս<br><br>համապատասխան կադրերի բացակայություն | աճի դանդաղում |
| Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում | նախաձեռնությունների պակաս, ոչ ճիշտ համագործակցություն<br><br>իրազեկման պակաս<br><br>համապատասխան կառույցների աշխատանքի ոչ արդյունավետություն<br><br>համայնքային բյուջեում խնդրի վերաբերյալ ֆինանսական միջոցների առկայության բացակայություն | երիտասարդների հոսք դեպի մայրաքաղաք, մասնակի խնդիրների լուծում<br><br>անտարբերություն<br><br>հարմարվելու քաղաքականություն<br><br>աշխատատեղերի բացակայություն<br><br>նորարական գաղափարների հետընթաց |
| Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանում | սոցիալական առկա վիճակ<br><br>բնակարանային պայմաններ<br><br>արտագաղթ<br><br>ապագայի նկատմամբ անվստահություն<br><br>խրախուսող և նպատակային ծրագրերի բացակայություն | բնակչության թվի նվազում, բնակչության «ծերացում» մանկապարտեզների, դպրոցների թերբեռնվածություն |
| Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացում, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծում | տեղեկատվության պակաս<br><br>համակարգային խնդիրների բաց<br><br>բնակչության մտածելակերպ<br><br>կանխարգելող ծրագրերի ձևական բնույթ<br><br>անվստահություն ոլորտի նկատմամբ<br><br>առողջ ապրելակերպ քարոզող ծրագրերի սակավություն<br><br>ժամանակակից սարքավորումների | հիվանդությունների ուշ հայտնաբերում<br><br>հետազոտությունների պակաս<br><br>հիվանդությունների թվի աճ |

| | | |
|---|---|---|
| | անհասանելիություն | |
| Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում | տեղեկատվության պակաս<br>հասարակական կարծրատիպեր, մտածողություն<br>ֆիզիկական անմատչելիություն, տեղաշարժի դժվարություններ<br>ենթակառուցվածքների պակաս<br>արդյունավետ և նպատակային ծրագրերի սակավություն, ոլորտային ՀԿ-ների բացակայություն կամ ոչ արդյունավետ աշխատանք | մեկուսացում միջավայրից<br>ինտեգրման խնդիրների ավելացում<br>ոչ նպատակային և արդյունավետ ծրագրերի իրականացում<br>ոլորտային հիմնախնդիրների կուտակում |
| Բարեգործության խթանում՝ համայնքում մշակութային, կրթական գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով | վստահության պակաս<br>իրազեկման պակաս<br>ուղղորդման բացակայություն<br>համայնքային առաջնահերթությունները ներկայացնելու խնդիր<br>բարեգործական կառույցների հետ անարդյունավետ աշխատանք | բարեգործական ծրագրերի պակաս<br>արտաքին կապերի բացակայություն<br>ոչ նպատակային ներդրումներ |
| Մարդկային ռեսուրսների կառավարում | կադրային ոչ ճիշտ քաղաքականություն<br>աշխատանքային ոչ հստակ հարաբերություններ<br>աշխատավարձերի պակաս<br>աշխատատեղերի սակավություն<br>վերապատրաստման դասընթացների անարդյունավետություն<br>ոլորտի գործիքակազմին չտիրապետում<br>խրախուսման մեխանիզմների ոչ լիրաժեքություն կամ չկիրառում | գործունեության անարդյունավետություն<br>կադրերի ոչ ճիշտ ընտրություն<br>անբավարար արդյունքներ<br>մոտիվացիայի պակաս<br>կադրային հոսք<br>պատասխանատվության պակաս |

| | | |
|---|---|---|
| Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն | գործազրկություն<br><br>բազմազավակ ընտանիքների կարիքներ<br><br>ցածր կենսամակարդակ<br><br>աշխատատեղերի պակաս | աղքատ հասարակություն<br><br>ֆինանսական օժանդակության ավելացում<br><br>զարգացման տեմպերի ոչ բավարար մակարդակ<br><br>արտագաղթ<br><br>ուրբանիզացիա |

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների /ՈՒԹՀՍ/ վերլուծություն

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | Հնարավորություններ | Սպառնալիքներ |
|---|---|---|---|
| ✓ Համայնքի աշխարհագրական դիրք (Սևանա լճի ափին է, միջպետական ճանապարհին կից).<br>✓ Ամենաշատ արևային օրերի քանակ.<br>✓ Մտավոր ներուժի առկայություն.<br>✓ Ակտիվ երիտասարդներ.<br>✓ Առկա են չօգտագործվող արտադրական շենքեր.<br>✓ Սևանա լճի ափամերձ տարածք, որը խթանում է զբոսաշրջության զարգացումը.<br>✓ Ապակենտրոնացված հարաբերությունների հաջողված օրինակներ.<br>✓ Պատմամշակութային հուշարձանների առկայություն.<br>✓ Ծառայությունների մատուցման ցանց.<br>✓ Ինտերնետ ակումբների առկայություն.<br>✓ Բանկերի մասնաճյուղեր.<br>✓ Քաղաքում առկա եկեղեցի.<br>✓ Առևտրի սրահներ և մարկետներ.<br>✓ Ջրամատակարարման համակարգ.<br>✓ Համայնքը գազաֆիկացված է.<br>✓ Կապի օպերատորների առկայություն.<br>✓ Կրթական և բժշկական հաստատությունների առկայություն.<br>✓ ՀՈԱԿ-ների առկայություն.<br>✓ Հյուրընկալ միջավայր.<br>✓ Անվտանգ և ապահով տարածաշրջան.<br>✓ Երիտասարդ կամավորներ. | ✓ Գործազրկություն.<br>✓ Արտագնա աշխատանք.<br>✓ Ուրբանիզացիա.<br>✓ Արդյունաբերական ձեռնարկությունների բացակայություն.<br>✓ Արտադրական ձեռնարկությունների փոքր թիվ.<br>✓ Բնական պայմաններ, (քամի, երկարատև, խստաշունչ ձմեռ).<br>✓ Անապահով ընտանիքներ.<br>✓ Ազատ ժամանցի կազմակերպման վայրերի սակավություն.<br>✓ Հարկերի հավաքագրման ոչ բարձր տոկոս.<br>✓ Անբարեկարգ ճանապարհների առկայություն.<br>✓ Բակային հատվածների անբերակարգ վիճակ.<br>✓ Կանաչ տարածքների փոքր ծավալ.<br>✓ Վթարային շենքերի առկայություն.<br>✓ Տանիքների հիմնանորոգման խնդիր.<br>✓ Ձեռներեցության ոչ բավարար զարգացվածություն.<br>✓ Ֆինանսական ոչ բավարար ռեսուրսներ.<br>✓ Երթևեկության նշանների և ճանաչողական ցուցանակների բացակայություն.<br>✓ Ներդրումների ցածր մակարդակ.<br>✓ Միջհամայնքային տրանսպորտի թույլ զարգացվածություն.<br>✓ Ցածր իրավագիտության մակարդակ<br>✓ համայնքի տարածքում<br>✓ Վերելակների ամբողջական փոփոխության կարիք.<br>✓ | ✓ Դոնոր կազմակերպությունների և ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում քույր քաղաքների կողմից ներդրումներ.<br>✓ Կառավարության աջակցման ծրագրեր (ներառյալ՝ պետական բյուջեից տրվող դոտացիաներ և սուբվենցիաներ).<br>✓ Մասնավոր սեկտորի և բարերարների կողմից ներդրումային ծրագրերի իրականացում.<br>✓ Երիտասարդների համար բնակարանաշինություն.<br>✓ Տրանսվերտների հոսք.<br>✓ ՓՄՁ-ների հնարավորությունների ընդլայնում.<br>✓ Տուրիստական հոսքերի մեծացում, տուրիստական նոր երթուղիների ներդնում, որակյալ մասնագետների ներգրավում.<br>✓ Սևանա լճի ափին գտնվելը<br>✓ համայնքում ընդգրկված բնակավայրերի առանձնահատկություններ<br>✓ Նոր հյուրատների ավելացում | ✓ Բնակլիմայական պայմաններ.<br>✓ Արտագաղթ.<br>✓ Ամուսնալուծությունների թվի աճ.<br>✓ Գնաճ.<br>✓ Աճի ցածր տեմպեր.<br>✓ Վթարային շենքեր.<br>✓ Պատերազմի հնարավոր վտանգ.<br>✓ Անկայունություն քաղաքական դաշտում.<br>✓ հետպատերազմական անկումային տրամադրություն |

## 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

### 3.1 *Համայնքի զարգացման տեսլական*

Համայնքի 5-ամյա զարգացման ծրագրի իրականացման արդյունքում ակնհայտ են լինելու մի շարք փոփոխություններ՝ համայնքային բազաների հստակություն, բյուջեի 100 տոկոս հավաքագրման ապահովում, ներդրումների աճ, նպատակային և հասցեական ծրագրերի իրականացում, ՏԻՄ-ի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, ներհամայնքային ենթակառուցվածքների բարելավում, միջհամայնքային համագործակցության խթանում, բնակարանային ֆոնդի պահպանությանը միտված ծրագրերի իրականացում, նախադպրոցական, արտադպրոցական, մարզամշակութային հաստատությունների շենքային պայմանների բարելավում, զբոսաշրջային գործի որակական բարելավում՝ քանակական ցուցանիշների արձանագրմամբ, հիմնական ծառայությունների հասանելիություն ունեցող տնային տնտեսությունների քանակի աճ, աշխատատեղերի ստեղծում, տեղական ռեսուրսների օգտագործման հնարավորությունների հստակեցում, բնակչության կենսամակարդակի բարձրացում, քույր քաղաքներ ցանցի ընդլայնում, նորարական գաղափարների ներդրում:

Ունենալով համայնքի՝ առաջիկա 5 տարվա համար արդեն իսկ մատնանշված տեսլականը՝ հստակեցվելու են նաև զարգացման հիմնական ուղղությունները՝

- ✓ զբոսաշրջության կայուն զարգացում
- ✓ գործարար միջավայրի բարելավում
- ✓ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում

Այս ուղղությունների համար զարգացման խթան են դառնալու այն ծրագրերն ու ընթացիկ աշխատանքները, որոնց շնորհիվ գրանցվելու են վերը նշված փոփոխությունները:

Առաջիկա տարիների համար համայնքի համար սահմանվում են կայուն զարգացման հետևյալ ցուցանիշները

| Կայուն զարգացման ցուցանիշ | Թիրախային արժեք | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ | 2.5% | 3% | 3,5% | 4% | 4,5% | 5% |
| Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը | 0.5% | 0.5% | 0.5% | 1% | 1.5% | 2% |
| Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի | 60.5% | 65% | 70% | 75% | 80% | 85% |
| Արտադպրոցական | 30.22% | 33% | 35% | 37% | 40% | 44% |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հաստատություններում ընդգրկված երեխաների թվի հարաբերությունը համայնքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի | | | | | | |
| Համայնք այցելած զբոսաշրջիկների թվաքանակի աճ նախորդ տարվա համեմատությամբ | 10.2% | 15.4% | 20.1% | 27% | 36.5% | 48.5% |

### 3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1. *Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում*

նպատակներ -

- ✓ խրախուսել գործարար գաղափարներն ու առաջարկներն ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում.
- ✓ ստեղծել աջակցման ֆոնդ.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով | 2% | 2.5% | 3% | 3,5% | 4% | 4,5% | 5% |
| Համայնքի աջակցությամբ գործարար գաղափարների իրականացում | - | - | 2 | 3 | 5 | 7 | 9 |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. **Համայնքում և մարզում արտադրվող ապրանքների էքսպո-ցուցահանդեսի անցկացում**

Արդյունք - Արտադրողների, նորարական գաղափարներ ունեցողների համար հնարավորության ընձեռում, որը կդառնա շուկաներ գտնելու, սեփական արտադրանքն ու գաղափարը հանրայնացնելու լավագույն հարթակ: Շփումների, աշխատատեղերի ստեղծման հնարավորություն, արտադրական ծավալների մեծացում: Ներգրավված է շուրջ երեքտասնյակ արտադրող:

2. **«Գործարարության արդի հիմնախնդիրները, ոլորտային մարտահրավերները և հեռանկարները» համաժողովի անցկացում՝ տեղացի գործարարների, շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների, ապակենտրոնացված համագործակցության գործընկերների մասնակցությամբ**

Արդյունք - Ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում գործընկեր համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ համաժողովը նոր առաջարկների, տեղի և արտերկրի շուկաների ուսումնասիրման, առաջարկի և պահանջարկի գնահատման, ներդրումային ծրագրերի, ներդրումներ կատարելու հնարավորություն է տալու: Համայնքի աջակցությամբ և միջնորդությամբ արտադրողն ու իրացնողը կհանդիպեն միմյանց: Համաժողովի մասնակիցները կստանան ամբողջական տեղեկատվություն տարածաշրջանում գործարարության համար անհրաժեշտ ներդրումների, հետաքրքրություն ներկայացնող ոլորտների վերաբերյալ:

2. *Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում*

նպատակներ -

- ✓ բարելավել նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների շենքային պայմանները.
- ✓ նպաստել և խրախուսել հետաքրքրություն ներկայացնող և պահանջարկ վայելող խմբակների գործունեությանը.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով) | 56% | 60.5% | 65% | 70% | 75% | 80% | 85% |
| Արտադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվի հարաբերությունը համայնքի դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով | 27.2% | 30.22% | 33% | 35% | 37% | 40% | 44% |
| Նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների հիմնանորոգված շենքերի կամ տարածքների թիվը | 3 | 3 | 7 | 8 | 9 | 10 | 10 |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. «Սևանի թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում

Արդյունք - Մանկապարտեզի հիմնանորոգմամբ և կահավորմամբ կստեղծվի հարմարավետ և ապահով միջավայր նախադպրոցական տարիքի երեխաների համար, որտեղ հաճախող երեխաների թիվը կավելանա: Հիմնանորոգման աշխատանքներում կընդգրկվեն տեղացի բանվորներ և մասնագետներ:

**2. «Վ. Մարգսյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում կամ ամրացում**

Արդյունք - Երաժշտական դպրոցի շենքի հիմնանորոգմամբ կամ ամրացմամբ կստեղծվեն անվտանգ, հարմարավետ պայմաններ, կմեծանա դպրոցի արդյունավետ աշխատանքը, կշատանա երեխաների թիվը: Հիմնանորոգման աշխատանքներում կընդգրկվեն տեղացի բանվորներ և մասնագետներ:

**3. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողական վարձավճարների զրոյացում (անվճար)**

Արդյունք - Նախադպրոցական ուսումնական հաստատություններում կավելանա երեխաների հաճախելիությունը, կկենտրոնացվի սննդի մատակարարման գործընթացը, կարձանագրվի ռեսուրսների խնայողություն:

- ✓ Ծաղկունք բնակավայրի մանկապարտեզի վերանորոգում

Մանկապարտեզի տարածքը և շենքը գտնվում են վատ ֆիզիկական վիճակում, անհրաժեշտ է վերանորոգում:

- ✓ Գեղամավան բնակավայրում նախադպրոցական կրթության դաստիարակության կազմակերպում

Հովանավորների և դոնոր կազմակերպությունների ներգրավմամբ, ինչպես նաև համայնքի բյուջեի ֆինանսավորմամբ գործարկել մանկապարտեզը և կազմակերպել համայնքում երեխաների նախադպրոցական դաստիարակությունը:

3. *Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ*

նպատակներ -

- ✓ ապահովել համաքաղաքային միջոցառումների որակական և քանակական բաղադրիչները.
- ✓ վերականգնել բակային կյանքի առօրյայի կազմակերպման լավագույն ավանդույթները՝ ավելացնելով խաղա և մարզահրապարակների թիվը
- ✓ արդիականացնել գրադարանային համակարգը.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ | 26 | 33 | 35 | 38 | 41 | 44 | 49 |
| Համայնքում գործող մշակութային խմբակների թիվ | 30 | 31 | 32 | 33 | 35 | 36 | 37 |
| Մշակութային խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների թվին՝ արտահայտված տոկոսով | 19.6% | 22.1% | 25.1% | 28.1% | 32% | 35.5% | 41% |
| Համայնքապետարանի միջոցներով համայնքում կազմակերպված մարզական միջոցառումների թիվ | 12 | 13 | 15 | 18 | 22 | 24 | 26 |
| Համայնքային գրադարանի (ներառյալ էլեկտրոնային գրադարանի) առկայություն | + | + | + | + | + | + | + |
| Համայնքում խաղահրապարակների և մարզահրապարակների թիվ | 9 | 10 | 11 | 13 | 15 | 16 | 18 |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

✓ <u>Հանդիսությունների սրահի գույքի ձեռքբերում</u>

Դդմաշեն գյուղում խիստ անհրաժեշտություն է հանդիսությունների սրահ ունենալը: Հանդիսություններ, ինչպես նաև սգո արարողություններ կազմակերպելու համար բնակիչներն օգտվում են Սևան կամ Հրազդան քաղաքների տարածքներում գործող ռեստորանային համալիրների ու նմանատիպ այլ օբյեկտների ծառայություններից, ինչը շատ անգամներ առաջացնում է ավելորդ ֆինանսական և կազմակերպչական խնդիրներ ու դժվարություններ: Հանդիսությունների սրահի հիմնանորոգումը կապված է ֆինանսական մեծ ծախսերի հետ, ուստի նպատակահարմար էր այն իրականացնել փուլերով:

Ծրագրի 3 փուլերով **<u>ամբողջովին</u>** վերանորոգվել է հանդիսությունների սրահի շենքի երկու հարկերը: Ծրագրի 4-րդ փուլով /ներկայացվում է առանձին հայտով/ նախատեսվում է հանդիսությունների սրահի հարակից տարածքի՝ շուրջ 1500քմ բարեկարգում /այդ թվում՝ ասֆալտապատում, սալապատում/, որի հիմնական մասը ծառայելու է որպես ավտոկայանատեղի, ցանկապատում՝ շուրջ 420 գծամետր՝ 1.5մ բարձրությամբ:

Այս փուլով նախատեսվում է գույքի ձեռքբերում, մասնավորապես՝ էլեկտրական սարքավորումներ, կահույք, սպասք և այլ պարագաներ:

✓ <u>Հանդիսությունների սրահի հիմնանորոգում 4-րդ փուլ /տարածքի ցանկապատում և բարեկարգում</u>

*Դդմաշեն գյուղում խիստ անհրաժեշտություն է հանդիսությունների սրահ ունենալը: Հանդիսություններ, ինչպես նաև սգո արարողություններ կազմակերպելու համար բնակիչներն օգտվում են Սևան կամ Հրազդան քաղաքների տարածքներում գործող ռեստորանային համալիրների ու նմանատիպ այլ օբյեկտների ծառայություններից, ինչը շատ անգամներ առաջացնում է ավելորդ ֆինանսական և կազմակերպչական խնդիրներ ու դժվարություններ: Հանդիսությունների սրահի հիմնանորոգումը կապված է ֆինանսական մեծ ծախսերի հետ, ուստի նպատակահարմար էր այն իրականացնել փուլերով: Ծրագրի 3 փուլերով* ***<u>ամբողջովին</u>*** *վերանորոգվել է հանդիսությունների սրահի շենքի երկու հարկերը:*
*4-րդ փուլով նախատեսվում է հանդիսությունների սրահի տարածքի՝ շուրջ 1500քմ բարեկարգում /այդ թվում՝ ասֆալտապատում, սալապատում/, որի հիմնական մասը ծառայելու է որպես ավտոկայանատեղի: Հանդիսությունների սրահի ու կուլտուրայի տան ընդհանուր ցանկապատում՝ շուրջ 420 գծամետր՝ 1.5մ բարձրությամբ:*

✓ <u>Լճաշենի <<Երկրաբանական թանգարան>>ՀՈԱԿ-ի գույքի ձեռքբերում</u>

Համայնքի անցյալի, ներկայի և ապագայի հանրահռչակում, պատմամաշակութային ժառանգության պահպանում և տարածում, զբոսաշրջության զարգացում:

✓ <u>Լճաշենի <<Երկրաբանական թանգարան>>ՀՈԱԿ-ի բակի և մուտքի կապիտալ վերակառուցում</u>

Համայնքի անցյալի, ներկայի և ապագայի հանրահռչակում, պատմամաշակութային ժառանգության պահպանում և տարածում, զբոսաշրջության զարգացում:

- ✓ Լճաշեն բնակավայրի Սուրբ Աստվածածին>> եկեղեցու անավարտ շինարարության շարունակում

Ապահովել համայնքի բնակչության աղոթատեղիի առկայությունը, հայ առաքելական եկեղեցու դերի բարձրացում, հոգևոր և կրոնական կապի ամրապնդում:

- ✓ Սեմյոնովկա բնակավայրի նախկին մշակույթի տան շենքի կապիտալ վերանորոգում

Համայնքի նախկին մշակույթի տան հիմնանորոգմամբ կբարելավվի շենքի սեյսմիկ վիճակը: Ազգաբնակչությունը կունենա վերանորոգված արարողությունների սրահ, համայնքապետարան, ամբուլատորիա: Կստեղծվեն բարեկեցիկ պայմաններ բնակավայրի մշակութային կյանքն ակտիվացնելու համար:

- ✓ Սեմյոնովկա համայնքի խաղահրապարակի ցանկապատում, կանաչապատում

Կբարելավվի հարակից տարածքը, կստեղծվի բարեկեցիկ միջավայր: Համայնքի երեխաների համար կլինի ժամանակ անցկացնելու վայր, ավելի հաճախ կշփվեն երեխաներն իրար հետ, ինչպես նաև կդառնա հիմք համայնքում սպորտի զարգացմանը:

- ✓ Ակումբի շենքի տանիքի և 2-րդ հարկի վերանորոգում Վարսեր բնակավայրում

Բացել մի շարք մշակութային՝ կերպարվեստի, ասեղնագործության, պարի, և սպորտային՝ կարատե, բռնցքամարտ, ըմբշամարտ, խմբակներ: Խմբակների ֆինանսավորումը մասամբ հոգալու է գյուղապետարանը: Իրականում այս ծրագիրը շատ կարևոր նշանակություն ունի համայնքի համար, քանի որ հնարավորություն կտա երեխաներին ինքնադրսևորվելու և իրենց տաղանդները բացահայտելու համար: Այս ծրագրի արժեքը կազմելու է 10 մլն դրամ:

- ✓ Գեղամավանի մշակույթի տան դահլիճի հիմնանորոգում

Ծրագիրը նախատեսում է Գեղամավանի մշակույթի տան դահլիճի հիմնանորոգում և կահավորում, ուսուցողական սենյակների կահավորում, հնարավորություն կնձեռնի համայնքում կազմակերպել մշակութային միջոցառումներ, մասնագետների ներգրավմամբ կազմակերպել տարբեր ուսուցողական, մշակութային, ինքնագործ և սպորտային խմբակներ, կազմակերպել համայնքում ակտիվ մշակութային կյանքը երիտասարդների ներգրավմամբ:

- ✓ Ջովարեր բնակավայրի << Սուրբ Ստեփանոս>> եկեղեցու վերանորոգում

<<Սուրբ Ստեփանոս>> բազիլիկ եկեղեցին հիմնանորոգվել է 1830թ.: 2-3 տարի է եկեղեցին փլուզման եզրին է: Բավարար ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով չի վերանորոգվել:

**2. Գրադարանային համակարգի վերազինում**

Արդյունք - Գրադարանային գործի ժամանակակից պահանջների բավարարում, տեխնիկական վերազինում, որի արդյունքում գրադարանից օգտվողների թվի աճ կգրանցվի, գրադարանը կդառնա մշակութային կենտրոն, կավելանան գործառույթները:

**3. Մարզահրապարակների և խաղահրապարակների կառուցում, բարեկարգում և կահավորում /1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ միկրոթաղամասերի, Նալբանդյան փողոց թիվ 26, 45 և 65 շենքերի հարևանությամբ բակային տարածքներ/**

Արդյունք - Բակային տարածքները կունենան հարմարավետ մարզահրապարակներ և խաղահրապարակներ, տարիքային բոլոր խմբերի համար կապահովվի ազատ ժամանցի կազմակերպումը, կվերականգնվեն բակային ավանդույթները, կլուծվի երեխաների անվտանգության խնդիրը, կավելանան կանաչ, մաքուր տարածքները:

**4. Սևան քաղաքի հայորդաց տան հիմնանորոգում.**

Արդյունք - Հիմնանորոգմամբ կլուծվեն մարդաշատ այդ հատվածի, հարակից համայնքների երեխաների ազատ և նպատակային ժամանցի կազմակերպման խնդիրները, կբացվեն նոր աշխատատեղեր, կապահովվի կրթադաստիարակչական բաղադրիչը, ներգրավված են համապատասխան մասնագետներ և խմբավարներ:

4. *<u>Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում</u>*

նպատակներ -

- ✓ Նպաստել «առողջ ապրելակերպ» մշակույթի ձևավորմանն ու արմատավորված ուղղված միջոցառումների հանրայնացմանը.
- ✓ Ակտիվացնել մարզական խմբակների գործունեությունը, նպաստել դրանց արդյունավետության բարձրացմանը.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Համայնքապետարանի օժանդակությամբ համայնքում գործող մարզական խմբակների թիվ | 31 | 33 | 33 | 35 | 38 | 40 | 41 |
| Մարզական խմբակներում ընդգրկված երեխաների ու պատանիների թվի հարաբերությունը համայնքի երեխաների ու պատանիների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով | 9.95% | 10.5% | 12.5% | 15% | 18% | 20% | 24% |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. **Մարզամշակութային փառատոնների անցկացում**

Արդյունք - Ի հայտ կգան ֆիզիկապես աչքի ընկնող երեխաներն ու պատանիները, կակտիվանա քաղաքի մարզամշակութային կյանքը, նպատակային կօգտագործվեն մարզահրապարակներն ու խաղահրապարակները, երեխաների նախասիրությունները կուղղորդվեն, կավելանան միջհամայնքային շփումները: Մասսայականացված են մի շարք մարզաձևեր:

2. **Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի մարզական գույքի ձեռքբերում**

Արդյունք - Ապագա ունեցող և կոմերցիոն հետաքրքրություն ներկայացնող մարզաձևերի զծով խմբակների գործունեության, երեխաների և պատանիների մեջ մարզաշխարհի նկատմամբ հետաքրքրություն արթնացնելու համար մարզադպրոցի մարզագույքի համալրում, որը մարզական խմբակների աշխատանքի արդյունավետության և բարելավման, առաջնությունների անցկացման հնարավորություն է ընձեռում:

✓ <u>Սպորտային և մանկական խաղահրապարակների ստեղծում</u>

Դդմաշեն գյուղում մինչև այժմ չկան սպորտային և /կամ բակային տարածքներ՝ երեխաների և երիտասարդության ժամանցն անցկացնելու համար: Սպորտային և մանկական խաղահրապարակների հիմնումը հնարավորություն կտա կազմակերպելու սպորտային տարաբնույթ խմբակներ և միջոցառումներ, ինչպես նաև երեխաների՝ ազատ և հաճելի ժամանց անցկացնելուն: Դրա համար անհրաժեշտ է կուլտուրայի տան հարավային մասում կառուցել վոլեյբոլի դաշտ և մանկական խաղահրապարակ, որտեղ տեղակայված կլինեն կարուսելներ և մանկական խաղային սարքավորումներ՝ բովանդակալից ազատ ժամանց կազմակերպելու համար:

✓ <u>Լճաշենի մարզադաշտի կապիտալ վերանորոգում</u>

Ծրագիրը ընդգրկում է համայնքի մարզադաշտի տրիբունայի, դաշտի և ամբողջ տարածքի վերանորոգումը, ամրացման աշխատանքները:

Լճաշենի մարզադաշտը համարվում է մարզի ամենամեծ մարզադաշտը և չափերը համապատասխանում են միջազգային չափանիշներին:

5. *<u>Համայնքում բնակարանային շինարարության խթանում և բնակարանային ֆոնդի պահպանում</u>*

նպատակներ -

✓ Նպաստել դեպի համայնք երիտասարդների հոսքին.
✓ Աջակցել բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքներին.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Համայնքապետարանում հաշվառված բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թվի հարաբերությունը համայնքի տնային տնտեսությունների ընդհանուր թվին, արտահայտված տոկոսով | | | | | | | |
| Հիմնանորոգված տանիքների թիվը | 14 | 14 | 16 | 19 | 22 | 25 | 28 |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. «Բնակարան երիտասարդ ընտանիքներին» ծրագիր

Արդյունք - կկանխվի արտագաղթը, կնպաստի բնակչության աճին, համայնք վերադարձող երիտասարդների թիվը կավելանա: Համայնքը դառնալով ծրագրի

շահառու՝ ոչ միայն նախապատրաստելու է համապատասխան փաստաթղթերը, կատարելու է կազմակերպչական բոլոր հարցերը, այլ նաև տրամադրելու է համապատասխան տարածք կամ կիսակառույց բնակարանաշինության համար:

2. Տանիքաշինություն

Արդյունք - Համայնքի 14 բազմաբնակարան շենքերի պահպանության, հետագա շահագործման խնդիրներից կարևորագույնը լուծված է, որի շնորհիվ բնակիչների համար /մասնավորապես՝ վերջին հարկերում բնակվողների/ կարգավորված է առաջնահերթություններից մեկը:

3. Շենքերի սեյսմակայունության բարձրացում, ամրացում

Արդյունք -

6. *Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում, աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում, համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովում*

նպատակներ -

- ✓ Ավելացնել կանաչապատ տարածքների մակերեսը՝ ապահովելով դրանց մաքրությունն ու ժամանակակից ձևավորումը.
- ✓ Բարելավել կոմունալ տնտեսության տեխնապարկը.
- ✓ Կազմակերպել համայնքային գերեզմանատների պահպանման և գործունեության ուղղված աշխատանքները.
- ✓ Քաղաքաշինական գործունեության իրականացում՝ համաձայն գլխավոր հատակագծի.
- ✓ Շարունակել գիշերային լուսավորության ցանցի ավելացումը.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | - | + | + | + | + | + | + |
| Համայնքում գլխավոր հատակագծին համապատասխան տրված շինարարական թույլտվությունների թվի հարաբերությունը տրված շինարարական թույլտվությունների ընդհանուր թվին, | - | 100% | 100% | 100% | 100% | 100% | 100% |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| արտահայտված տոկոսով | | | | | | | |
| Համայնքում քաղաքաշինական կանոնադրության առկայություն | - | + | + | + | + | + | + |
| Համայնքի սանիտարական մաքրման ենթարկվող տարածքի մակերեսի հարաբերությունը համայնքի ընդհանուր տարածքի մակերեսին, արտահայտված տոկոսով | 1.1% | 1.5% | 2% | 2.5% | 3% | 3.8% | 4.6% |
| Համայնքի կանաչ տարածքների տարեկան աճ, արտահայտված տոկոսով | 0.8% | 1.1% | 1.5% | 1.9% | 2.3% | 2.8% | 3.6% |
| Գերեզմանատների համապատասխանությունը հատակագծին (այսինքն՝ գերեզմանատան հաստատված տարածքից դուրս գերեզմանատեղի չի հատկացվում) | - | + | + | + | + | + | + |
| Գիշերային լուսավորությամբ ապահովված փողոցների թիվը | | | | | | | |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. Համայնքի կանաչ գոտիների գույքագրում, կանաչապատում և ծառատնկում

Արդյունք - Համայնքում առկա կանաչ գոտիների ընդհանուր տարածքի, դրա տեղակայման ճշտում, կանաչ տարածքների ավելացում, գազոնների մշակում, թփապատում, բնապահպանական խնդիրների լուծում:

2. «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տեխնապարկի վերազինում «Կոտայքի մարզի և Սևան քաղաքի կոշտ թափոնների կառավարում» ծրագրի շրջանակներում

Արդյունք - Նոր աղբավայրի շահագործում, մաքրության ծառայությունների դիմաց վճարների հավաքագրման նոր մեխանիզմներ, նոր և ժամանակակից տեխնիկայի, մասնագիտացված սարքավորումների տրամադրում, աղբահանության ոլորտում լուրջ ձեռքբերումներ՝ և տեխնիկապես, և աշխատանքների որակական բարելավման առումներով:

3. «Գիշերային լուսավորության ցանցի շահագործում»

Արդյունք - Համայնքների փողոցների զգալի մասն ունի գիշերային լուսավորություն, լուծված են երեկոյան ժամերին անվտանգության, մարդկանց երթևեկության, տրանսպորտային միջոցների գործարկման, տեղաշարժի խնդիրները: Համայնքը երեկոյան ժամերին դարձել է աշխույժ և մարդաշատ, նպատակային են օգտագործվում նաև բակային տարածքները:

5.Գագարին գյուղի ջրահեռացման ցանցի և ջրամբարի բաշխիչ ցանցի կառուցում, բարելավում

Կրճատված են ջրակորուստները ապահովված է ջրամատակարարման անընդմեջությանը, լուծված են առողջապահական և շրջակա միջավայրի հետ կապված մի շարք հարցեր:

6. Սևան քաղաքի ջրահեռացման համակարգի բարելավում

Բարելավված է քաղաքի ջրահեռացման ցանցի աշխատանքը՝ միաժամանակ լուծելով նաև բնապահպանական և հակահամաճարակային մի շարք խնդիրներ:

7. *Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհների, ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում*

նպատակներ -

- ✓ Նպաստել քաղաքի անվտանգ երթևեկության կազմակերպմանը, ապահով տեղաշարժին.
- ✓ Բարեկարգել ներհամայնքային ճանապարհներն ու փողոցները՝ պահպանելով քաղաքաշինական չափորոշիչները.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Համայնքում կահավորված ավտոբուսային կանգառների հարաբերությունը ավտոբուսային կանգառների ընդհանուր թվին | 45% | 55% | 60% | 70% | 80% | 90% | 100% |
| Համայնքային ենթակայության ճանապարհներին տեղադրված ճանապարհային նշանների թվի հարաբերությունն անհրաժեշտ ճանապարհային նշաններին, արտահայտված տոկոսով | 2% | 5% | 8% | 12% | 16% | 20% | 25% |
| Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով | 20% | 5% | 8% | 11% | 14% | 17% | 24% |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. **Սարգիս Սնանեցի, Նալբանդյան, Գրիբոյեդով, Մյասնիկյան, Չարենց, գ. Գագարինի փողոցների հիմնանորոգում**

Արդյունք - Հիմնանորոգված ևս հինգ փողոցների առկայություն՝ ճանապարհային նշանների տեղադրմամբ: Լուծված են բարեկարգման աշխատանքները, իրականացված անվտանգ երթևեկության պահպանումը:

2. **Սնան համայնքի Ցամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերը Սնան քաղաքին կապող ճանապարհի հիմնանորոգում, բարեկարգում**

Արդյունք - Համայնքի երկու թաղամասերը քաղաքին կապող ճանապարհները հիմնանորոգված են, անվտանգ երթևեկության համար՝ ապահովված համապատասխան ենթակառուցվածքներով և ճանապարհային նշաններով: Դարձել է դյուրին թաղամասերի և քաղաքի միջև տեղաշարժը, ավելացել է մարդկանց և ավտոմեքենաների հոսքը:

8. *Համայնքում շրջակա միջավայրի պահպանություն*

նպատակներ -

- ✓ Խրախուսել և մասնակցել էներգախնայողությանն ուղղված ձեռնարկների իրականացմանը.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Համայնքում էներգախնայող լամպերով լուսավորվող տարածքի հարաբերությունը ընդհանուր լուսավորվող տարածքին, արտահայտված տոկոսով | - | 10% | 14% | 19% | 26% | 31% | 38% |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. **«Քաղաքային կանաչ լուսավորություն»**

Արդյունք - Սևան քաղաքի արտաքին լուսավորության համակարգում էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման համար համապատասխան ֆինանսավորում ապահովելու նպատակով ստեղծվել է վերականգնվող ֆոնդ /բացված է արտաբյուջետային հաշիվ/:

Կազմակերպվել է ուսուցում նոր լուսատուներ տեղադրող պատասխանատու անձնակազմի համար:

2. **Արևային էներգիայի համակարգերի տեղադրում**

Արդյունք - Համայնքի մի շարք առանձնատներ և հաստատությունների շենքեր ապահովված են արևային ջրատաքացուցիչներով, որի շնորհիվ լուծված են բնապահպանական մի շարք խնդիրներ, ապահովված է էներգախնայողության ռեժիմը:

9. *Զբոսաշրջության զարգացման խթանում*

նպատակներ -

- ✓ Նպաստել համայնքի և տարածաշրջանի ներկայանալի դառնալուն, զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնելուն.
- ✓ Նախաձեռնել, խրախուսել և մասնակցել զբոսաշրջային համալիրի կառուցման աշխատանքներին.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Համայնք այցելած զբոսաշրջիկների թվաքանակի աճ նախորդ տարվա համեմատությամբ | 7.6% | 10.2% | 15.4% | 20.1% | 27% | 36.5% | 48.5% |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. **«Քաղաքը՝ ցուցանակներով» -**

Արդյունք - Քաղաքը դարձել է գրավիչ և հարմարավետ տուրիստների համար, որի շնորհիվ առավել դյուրին է քաղաքում տեղաշարժվելը, մարդկանց հոսքը դեպի տեսարժան կամ այցելության արժանի վայրեր

2. **Զբոսաշրջային տեղեկատվական գրասենյակի գործունեության բարելավում**

Արդյունք - Քաղաքում առկա է զբոսաշրջային տեղեկատվական գրասենյակ, թերակղզում՝ զբոսաշրջային շարժական տեղեկատվական գրասենյակ, որոնց գործունեության արդյունքում ավելացել է զբոսաշրջիկների հոսքը:

3. **Սևանը ներկայացնող տեսանյութերի, ֆիլմաշարի նկարահանում, տեղեկատվական և ճանաչողական գրքույկների, բրոշյուրների տպագրություն**

Արդյունք - Քաղաքը զբոսաշրջային գործի բարեփոխման ճանապարհին ունի տեղեկատվական հարուստ, ներկայանալի և անհրաժեշտ բազա, որը նպաստում է տուրիստական գործակալությունների հետ արդյունավետ աշխատանքի կազմակերպմանը, ամբողջական ինֆորմացիայի փոխանակմանը, զբոսաշրջային հոսքերը մեծացնելուն: Աշխատանքների կատարմանը ներգրավվել են երիտասարդ ռեժիսորներ և սցենարիստներ:

10. *Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում*

նպատակներ -

- ✓ Հիմնանորոգել և կահավորել կոնֆերենս-դահլիճ.
- ✓ Իրականացնել համայնքային միջոցառումներ, որոնց առանցքում երիտասարդներին վերաբերող խնդիրներն են.
- ✓ Նպաստել միջազգային ծրագրերում սևանցի երիտասարդների ներգրավմանը.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Համայնքի միջոցներով կազմակերպված ծրագրերի և միջոցառումների քանակ | 16 | 21 | 26 | 32 | 38 | 44 | 50 |
| Միջազգային ծրագրերում երիտասարդների ներգրավվածության թիվը | 5 | 5 | 7 | 10 | 15 | 18 | 24 |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ուսումնառող քաղաքներ» ցանց

Արդյունք - Իրականացված է ուսումնառության գործընթացի կայուն զարգացումը, որի հիմքում լավագույն փորձի փոխանակումն է՝ միջազգային հարթակի ստեղծմամբ: Ծրագրի ընթացքում իրականացվել են ուսումնառության տարբեր բաղադրիչներին միտված դասընթացներ, սեմինարներ, որոնց շնորհիվ համայնքն ունի կրթության ոլորտում նորարական նոր ծրագրեր՝ ներառական կրթությունից մինչև հեռահար ուսուցում:

Համայնքի աշակերտությունն ու երիտասարդությունը ներգրավված է ծրագրում:

**2. Կոնֆերենս-դահլիճի հիմնանորոգում և կահավորում**

Արդյունք - Առկա է համայնքապետարանի և համաքաղաքային միջոցառումների՝ հանրային քննարկումների, հանդիպումների, ասուլիսների, կոնֆերանսների, ֆորումների անցկացման համար հիմնանորոգված, կահավորված տարածք: Աշխուժացել և առավել հաճախակի են դարձել կազմակերպվող միջոցառումները: Դահլիճը տրվում է նաև վարձակալությամբ, որը համայնքի համար եկամտի լրացուցիչ աղբյուր է:

3. **Ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում երիտասարդների փոխանակում**

Արդյունք - Սևանի և քույր քաղաքների միջև ստորագրված Հուշագրի ուղղություններից մեկը՝ երիտասարդների փոխանակումը, լիովին արդարացված է և նպատակային: Փոխայցելությունների արդյունքում ձևավորվում է նոր մշակույթ, իրականացվում են բազմաթիվ նախաձեռնություններ, երիտասարդների համար ուսումը շարունակելու նոր հեռանկարներ են ուրվագծվում:

11. *Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում*

նպատակներ -

- ✓ Աջակցել համայնքում գործող սոցիալական ձեռնարկությունների գործունեությանը և ստեղծմանը.
- ✓ Ապահովել այն միջոցառումների քանակական և որակական կողմը, որոնք խրախուսում են հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը, և դերակատարումը.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Համայնքային կյանքում կազմակերպվող միջոցառումներ, որոնց մասնակցել են հաշմանդամություն ունեցող անձիք (որպես ընդհանուր միջոցառումների թվաքանակի տոկոս) | 7% | 9% | 12% | 16% | 20% | 25% | 29% |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. Աջակցություն սոցիալական ձեռնարկատիրությանը

Արդյունք - Սևանում գործում է «Երկնային մանանա» սոցիալական ձեռնարկությունը, որն աշխատանքով է ապահով համայնքային խնդիրներ ունեցող անձանց՝ ինտեգրելով հասարակությանը, ապահովելով նրանց կայուն եկամուտը: Համայնքն իր աջակցությամբ ապահովում է սոցիալական ձեռնարկության աշխատանքների շարունակականությունը, նոր գործընկերներ և բարերարներ է ներգրավում գործընթացում՝ ընձեռելով նոր աշխատատեղերի ստեղծման, արտադրական հզորությունների ավելացման հնարավորություն:

2. *Բարեգործության խթանում՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով*

նպատակներ -

- ✓ Մասնակցել բարեգործական ուղղվածություն ունեցող ծրագրերին նոր գործընկերներ ձեռք բերելու համար՝ խրախուսելով բարեգործական նախաձեռնությունները.
- ✓ Ապահովել բարերարների և շահագրգիռ անձանց ներգրավվածությունը համայնքային առաջնահերթ խնդիրների լուծմանը.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Բարեգործական ուղղվածություն ունեցող ակցիաներ և նախաձեռնություններ | 2 | 2 | 3 | 5 | 7 | 9 | 10 |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. **Բարեգործական համերգների, ճաշկերույթի և ներկայացումների կազմակերպում**

Արդյունք - Կազմակերպվում են բարեգործական ճաշկերույթներ, տոնավաճառներ, համերգներ, որոնց ընթացքում հանգանակված գումարը օգտագործվում են համայնքային առաջնահերթությունների լուծման համար, միաժամանակ բարեսիրական նոր ծրագրերի իրականացման համար ձեռք են բերվում գործընկերներ /անհատ և կազմակերպություն/:

13. *Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն*

նպատակներ -

- ✓ Իրականացնել սոցիալական խնդիրների մեղմացման քաղաքականություն.

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Սոցիալական պաշտպանությանը ուղղված ֆինանսական միջոցների հատկացում | 16մլն. | 17.5մլն. | 5մլն. | 7մլն. | 9մլն. | 10մլն. | 12մլն. |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. **Հասցեական սոցիալական օժանդակություն**

Արդյունք -Համայնքի խոցելի խմբերին՝ տարեցներ, բազմազավակ ընտանիքներ, գործազուրկներ, մեկից ավելի ուսանողներ ունեցող, կերակրողին կորցրած, Հայրենական Մեծ պատերազմի վետերանների, Արցախյան հերոսամարտում զոհվածների ընտանիքներ, հատկացվում է ֆինանսական օգնություն, ինչպես նաև՝ խորհրդատվական, օժանդակության մյուս հատվածը համապատասխան կառույցների հետ աշխատանքն է, մարդկանց ուղղորդելը:

2. **Համալիր սոցիալական ծառայության կենտրոնի ստեղծում**

Արդյունք - Միավորված են 3 սոցիալական ծառայությունները մեկ կենտրոնի կազմում: Համապատասխան տարածքը հիմնանորոգված է, կահավորված և հարմարեցված

այցելուների համար: Առավել դյուրին է դարձել սոցիալական հարցերի լուծման շղթան. խնայվում են ժամանակ և ռեսուրսներ:

14. *Մարդկային ռեսուրսների կառավարում*

նպատակներ -

- ✓ Պլանավորել մարդկային ռեսուրսների առաջարկն ու պահանջարկը.
- ✓ Նպաստել վերապատրաստման դասընթացների արդյունավետությունը՝ ստեղծելով հանարվորություններ աշխատողների զարգացման, մասնագիտական որակների բարձրացման համար

| Առանցքային ցուցանիշներ | Թիրախային արժեք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| Վերապատրաստման և մասնագիտական որակավորման դասընթացներին մասնակցած աշխատակիցների թիվը | 8 | 14 | 20 | 20 | 25 | 28 | 30 |

Նախատեսվող ծրագիր /ծրագրեր/

1. **ՏԻՄ-ում մարդկային ռեսուրսների կառավարման նոր գործիքների ներդրում**

Արդյունք - Տեղական մակարդակում առկա է պատշաճ կառավարում, որի համար ներդրվել է ստանդարտ գործիքակազմի նոր մոտեցում: Բարելավված են պաշտոնի անձնագրերը, կատարված է աշխատանքի կատարողականի գնահատում, ներդրված է գնահատման նոր մոդել: Կիրառվում են պաշտոնի անձնագրեր նաև հայեցողական պաշտոն ունեցող անձանց համար: Աշխատանքները դարձել են առավել համակարգված, արդյունավետ, ռեսուրսների կառավարման գործընթացը բարելավված է:

**Հավելվածներ**

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

1. Խնդիր - Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում

1.1 Համայնքում և մարզում արտադրվող ապրանքների Էքսպո-ցուցահանդեսի անցկացում

(Ծրագրի անվանումը)

Ծրագրի նպատակը - Խրախուսել և աջակցել արտադրողներին, գրավել նոր շուկաներ:

Ծրագրից ակնկալվող արդյունքը - համայնքում փոքր և միջին ձեռնարկատիրությամբ զբաղվողների թվի աճ, բնակչության կենսամակարդակի բարձրացում:

Հիմնական շահառուները - անհատ ձեռնարկատերեր, գործարարներ:

Ֆինանսավորման աղբյուրներ - Համայնք-մասնավոր հատված՝ 1 մլն. դրամ

1.2 «Գործարարության արդի հիմնախնդիրները, ոլորտային մարտահրավերները և հեռանկարները» համաժողովի անցկացում

(Ծրագրի անվանումը)

Ծրագրի նպատակը - Գործարարությանը խոչընդոտող գործոնների բացահայտում, նոր գաղափարների ու ծրագրերի հավաքագրում, համայնք-մասնավոր սեկտոր-պետություն համագործակցության ապահովում:

Ծրագրից ակնկալվող արդյունքը - համայնքում գործարարության վերաբերյալ նոր մոտեցումների մշակում, արտադրության աճի խթանում, ոլորտում նոր հնարավորությունների ստեղծում, գործընկերային հարաբերությունների հաստատում:

Հիմնական շահառուները - գործընկեր համայնքներ, գործարարներ, համապատասխան կառույցներ:

Ֆինանսավորման աղբյուրներ - Պետություն-համայնք-մասնավոր հատված՝ 400.000 դրամ

| Հ/Հ | Ծրագրի բաղադրիչ | Մոտավոր արժեք | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | Սկիզբ | Ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | | |
| | Համայնքում և մարզում արտադրվող ապրանքների Էքսպո-ցուցահանդեսի անցկացում | 1 մլն. դրամ | | | 1 | 1 | 2 | 2 | 2022 | 2026 |
| | «Գործարարության արդի հիմնախնդիրները, ոլորտային մարտահրավերները և հեռանկարները» համաժողովի անցկացում | 400.000 դրամ | | 1 | | | 1 | | 2022 | 2026 |

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2. Խնդիր - Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում

2. 1 «Սևանի թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում

(Ծրագրի անվանումը)

Ծրագրի նպատակը - Ապահովել մանկապարտեզ հաճախող երեխաների համար գրավիչ, ներդաշնակ և անվտանգ միջավայր:

Ծրագրից ակնկալվող արդյունքը - Երեխաների հաճախելիության թվի աճ, կրթական գործընթացի արդյունավետություն, ժամանակակից չափորոշիչներին համապատասխան պայմանների ապահովում:

Հիմնական շահառուները - 2-6 տարեկան երեխաներ, ծնողներ

Ֆինանսավորման աղբյուրներ - Համայնքային բյուջե՝ 15 մլն. դրամ

ներքին պաշտոնական դրամաշնորհ՝ 220. մլն դրամ

2.2 «Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում կամ ամրացում

(Ծրագրի անվանումը)

Ծրագրի նպատակը - Ստեղծել ժամանակակից պահանջներին համապատասխան արտադպրոցական հաստատություն

Ծրագրից ակնկալվող արդյունքը - Երեխաների հաճախելիության թվի աճ, կրթական գործընթացի արդյունավետություն, ժամանակակից չափորոշիչներին համապատասխան պայմանների ապահովում:

Հիմնական շահառուները - 7-18 տարեկան երեխաներ, ծնողներ

Ֆինանսավորման աղբյուրներ -

2.3 Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողական վարձավճարների զրոյացում (անվճար)

(Ծրագրի անվանումը)

Ծրագրի նպատակը - Ապահովել անվճար նախադպրոցական կրթություն

Ծրագրից ակնկալվող արդյունքը - Երեխաների հաճախելիության թվի 7% աճ, սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն

Հիմնական շահառուները - 2-6 տարեկան երեխաներ, ծնողներ

Ֆինանսավորման աղբյուրներ - համայնքային բյուջե՝ 170 մլն. դրամ

2.4 Ջովաբեր բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ցանկապատի վերանորոգում, տարածքի բարեկարգում, խաղային միջոցների

(Ծրագրի անվանումը)

Մանկապարտեզը շահագործման հանձնվելուց հետո ցանկապատը ընդհանրապես չի վերանորոգվել, տարիների ընթացքում քայքայվել է, մաշվել. ենթակա է վերանորոգման: Մանկապարտեզի շրջակա տարածքը ենթակա է բարեկարգման, խաղային միջոցների ավելացման:

| Հ/Հ | Ծրագրի բաղադրիչ | Մոտավոր արժեք | Ցուցանիշեր | Թիրախային արժեքներ | | | | | Սկիզբ | Ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 | | |
| 1 | «Սևանի թիվ 1 «Բողբոջ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում | | | | | | | | 2023 | 2026 |
| 2 | «Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում կամ ամրացում | | | | | | | | 2023 | 2026 |
| 3 | Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողական վարձավճարների զրոյացում (անվճար) | | | | | | | | 2022 | 2026 |
| 4 | Ջովաբեր բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ցանկապատի վերանորոգում, տարածքի բարեկարգում, խաղային միջոցների տեղադրում | | | | | | | | 2023 | 2026 |

3. Խնդիր - Ակտիվ մշակութային կյանքի կազմակերպում, մշակութային և պատմամշակութային ենթակառուցվածքների բարելավում

3. 1 Գրադարանային համակարգի վերազինում
(Ծրագրի անվանումը)

Ծրագրի նպատակը - Նպաստել գրադարանային գործի բարելավմանը:

Ծրագրից ակնկալվող արդյունքը - Գրադարանը հագեցված է ժամանակակից տեխնիկական միջոցներով, առկա է գրադարանից օգտվողների թվի աճ, այն վերածվել է մշակութային հարթակի:

Հիմնական շահառուները - համայնքի, տարածաշրջանի բնակիչներ:

Ֆինանսավորման աղբյուրներ -

3.2 Սևան քաղաքի հայորդաց տան հիմնանորոգում
(Ծրագրի անվանումը)

Ծրագրի նպատակը - Ունենալ մարզամշակութային հաստատություն:

Ծրագրից ակնկալվող արդյունքը - Ստեղծված են անհրաժեշտ պայմաններ երեխաների ազատ ժամանցի կազմակերպման, նախասիրությունների բացահայտման համար:

Հիմնական շահառուները - 5-18 տարեկաններ, համայնքի բնակիչներ:

Ֆինանսավորման աղբյուրներ - բարեգործություն

**3.3** Սուրբ Թադեոս Եկեղեցու վերանորոգում
(Ծրագրի անվանումը)

